ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԳԱՎԱՌ – 2026

Հաստատված է ԳՊՀ գիտական խորհրդի 2026թ. մայիսի 22-ի թիվ 10 նիստում

Ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան

Սույն ձեռնարկը բովանդակում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) կրթության որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) քաղաքականության հիմունքները, սկզբունքները, ընթացակարգերն ու կառուցակարգերը՝ հիմք ընդունելով բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները (այսուհետ՝ ՈԱԵՉՈ), Հայաստանի մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակը:

Ձեռնարկը նախատեսված է Գավառի պետական համալսարանի կառավարման մարմինների, ուսանողների, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի, ինչպես նաև ոլորտի փորձագետների և այլ շահակիցների համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3
ԳԼՈՒԽ 1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ.....5
1.1. Բարձրագույն կրթության որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ.....7
1.2. Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման եվրոպական չափորոշիչներ.....18
ԳԼՈՒԽ 2. ՀՀ-ՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ.....23
2.1. «Որակ» հասկացության սահմանումը.....23
2.2. Որակի ապահովման համակարգը ՀՀ-ում.....24
ԳԼՈՒԽ 3. ԳՊՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....33
3.1. ԳՊՀ որակի ապահովման քաղաքականության նպատակը 33
3.2. ԳՊՀ որակի ապահովման քաղաքականության խնդիրները.....38
3.3.ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացման կառուցակարգերը.....39
3.4. Որակի ներքին ապահովման ընթացակարգեր.....40
3.5. Որակի ապահովման համակարգում ներգրավված ԳՊՀ մարմինները և դրանց գործառույթները.....42
3.6. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, հաստատում, շարունակական մշտադիտարկում և բարելավում.....48
3.7. Ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդում և գնահատում.....53
3.8. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակի ապահովում.....56
3.9. ԳՊՀ ուսումնական ռեսուրսներ և ուսանողներին աջակցություն.....59
3.10. ԳՊՀ տեղեկատվության կառավարում.....62
3.11. ԳՊՀ հանրային պատասխանատվություն.....66
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....69
ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....71

ՆԱԽԱԲԱՆ

Գավառի պետական համալսարանը՝ որպես բարձրագույն կրթություն իրականացնող հաստատություն, իր գործունեության ռազմավարության հիմքում դնում է կրթության որակի ապահովումն ու շարունակական բարելավումը՝ որպես ինստիտուցիոնալ զարգացման, հաշվետվողականության և մրցունակության առանցքային գործոն: Այս համատեքստում Համալսարանը հետևողականորեն իրականացնում է մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) արդիականացման, արդյունավետության բարձրացման և եվրոպական կրթական չափանիշներին համապատասխանեցմանն ուղղված քաղաքականություն:

ԳՊՀ ՈԱ քաղաքականությունը բխում է «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված առաքելությունից և առաջնահերթություններից՝ ***բնական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ուղղություններով բարձրագույն ՄԿԾ-ների որակյալ իրականացումը, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջների հաշվառմամբ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մրցունակ մասնագետների պատրաստումը***, որոնցով սահմանվում են Համալսարանի գործունեության հիմնական ուղղությունները, նպատակները և արդյունավետության ցուցիչները: Այս համատեքստում 2006 թվականից ԳՊՀ-ը, միանալով Բոլոնյան գործընթացին, որդեգրել է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի սկզբունքներն ու արժեքները՝ նպատակ ունենալով ապահովել կրթության որակի համադրելիությունն ու ճանաչելիությունը միջազգային կրթական միջավայրում: Համալսարանի կրթական գործունեության որակը հավաստվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հաջորդաբար իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների արդյունքում՝ ստանալով համապատասխանաբար 2017 և 2021 թվականներին հավատարմագրման վկայականներ:

Ներկայումս Համալսարանում ձևավորված և ամուր հիմքերի վրա է դրված կրթության ՈԱ մշակույթը, որը հիմնված է ԳՊՀ առաքելության և զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների վրա և միտված է ներքին ու արտաքին շահակիցների ակնկալիքների հաշվառմամբ բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը:

ԳՊՀ ռազմավարական նպատակների իրագործման համար մշակվել են կրթության ՈԱ քաղաքականության հիմունքները և ՈԱ համակարգի մոդելը, որոնց նկարագրությունը ներկայացված է սույն ձեռնարկում: Ձեռնարկը սահմանում է Համալսարանի գործունեության հիմնական գործընթացների՝ պլանավորման, իրականացման, գնահատման և շարունակական բարելավման համակարգային մոտեցումները և գործիքակազմը՝ միաժամանակ ապահովելով Համալսարանի գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, ՄԿԾ-ների շարունակական բարելավումը և շնորհվող որակավորումների արժանահավատությունը:

ԳՊՀ զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների իրականացումն ու դրանց արդյունավետության գնահատումն ապահովվում են սույն ձեռնարկով սահմանված ՈԱ կառուցակարգերի կիրառմամբ:

ԳԼՈՒԽ 1.
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափորոշիչներն ու ուղենիշները (ՈԱԵՉՈ)[1] հանդիսանում են համաեվրոպական շրջանակային փաստաթուղթ, որը սահմանում է բարձրագույն կրթության որակի ապահովման ընդհանուր սկզբունքները, չափանիշները և մոտեցումները: Դրանք ուղղված են բարձրագույն կրթության հաստատություններում ուսուցման և դասավանդման որակի ապահովմանն ու շարունակական բարելավմանը՝ ապահովելով համակարգերի համադրելիությունը և փոխադարձ վստահությունը եվրոպական երկրների միջև:

ՈԱԵՉՈ-ն առաջին անգամ ընդունվել է 2005 թվականին՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի[2] (այսուհետ՝ ԵԲԿՏ) անդամ պետությունների կրթության նախարարների կողմից՝ որպես Բոլոնիայի գործընթացի[3] կարևոր բաղադրիչ: 2015 թվականին այն վերանայվել և արդիականացվել է՝ հաշվի առնելով բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցած զարգացումները, մասնավորապես՝ ուսանողակենտրոն ուսուցման տարածումը, կրթության միջազգայնացումը և թվայնացումը:

ՈԱԵՉՈ-ի հիմնական նպատակն է ձևավորել ՈԱ միասնական ըմբռնում և մոտեցումներ՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում: Այն ծառայում է որպես ուղենիշ բարձրագույն կրթության հաստատությունների ներքին ՈԱ համակարգերի, ինչպես նաև արտաքին գնահատման գործընթացների համար:

---

1 Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG), Brussels, 2015՝ chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.enqa.eu/wp-content/uploads/2015/11/ESG_2015.pdf.

2 The European Higher Education Area (EHEA)՝ https://ehea.info/about-ehea/

3 The Bologna Process՝ https://ehea.info/about-ehea/#introcution.

ՈԱԵՉՈՒ-ն նպաստում է կրթության թափանցիկության բարձրացմանը, որակավորումների ճանաչմանը և բարձրագույն կրթության համակարգերի միջև համագործակցության զարգացմանը:

ՈԱԵՉՈՒ-ի նպատակների արդյունավետ իրագործման համար այն կառուցվածքային առումով բաժանված է երեք փոխկապակցված բաժինների՝

1. բարձրագույն կրթության որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ,
2. բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման եվրոպական չափորոշիչներ,
3. որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական չափորոշիչներ:

Այս բաժանումը նպատակ ունի ապահովել որակի ապահովման գործընթացների ամբողջականությունն ու համակարգվածությունը՝ ընդգրկելով ինչպես բուհերի ներսում իրականացվող գործընթացները, այնպես էլ արտաքին գնահատման և վերահսկողության մեխանիզմները: Միևնույն ժամանակ, այս երեք բաղադրիչները գործում են սերտ փոխկապակցվածությամբ և ձևավորում են միասնական եվրոպական ՈԱ շրջանակ: Արտաքին ՈԱ-ը հիմնվում է ներքին ՈԱ չափորոշիչների վրա՝ ապահովելով բուհերի կողմից իրականացվող գործընթացների համապատասխանությունն արտաքին գնահատման պահանջներին: Իր հերթին, ՈԱ գործակալությունների գործունեությունը հենվում է արտաքին գնահատման սկզբունքների վրա՝ ապահովելով դրանց թափանցիկությունն ու վստահելիությունը:

Այսպիսով, երեք բաղադրիչները գործում են փոխլրացնող սկզբունքով՝ ինչպես բարձրագույն կրթության հաստատություններում, այնպես էլ ՈԱ գործակալություններում:

ՈԱԵՉՈՒ-ները ներկայացնում են ԵԲԿՏ-ում ՈԱ վերաբերյալ համաձայնեցված և ընդունված մոտեցումներ, որոնք ենթակա են կիրառման բարձրագույն կրթության բոլոր աստիճաններում: Դրանք ապահովում են ընդհանուր հենք՝ կրթության որակի գնահատման, համադրելիության և շարունակական բարելավման համար:

Հայաստանի Հանրապետությունը, որպես ԵԲԿՏ-ի անդամ երկիր 2005 թվականից[4] ընդունել է ՈԱԵՉՈ -ի սկզբունքներն ու մոտեցումները և դրանք ներառել իր ազգային ՈԱ համակարգում: ՀՀ-ում ՈԱԵՉՈ-ի պահանջներն ու չափորոշիչները կիրառվում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բուհերում՝ ապահովելով կրթական ծրագրերի որակի համապատասխանությունը եվրոպական չափանիշներին:

ՀՀ-ում ՈԱԵՉՈ-ի սկզբունքների ներդրումը նպաստում է բարձրագույն կրթության համակարգի արդիականացմանը, կրթության որակի բարձրացմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը և հայաստանյան բուհերի մրցունակության բարձրացմանը: Այն նաև հիմք է հանդիսանում ՄԿԾ-ների հավատարմագրման, որակի ներքին ապահովման համակարգերի ձևավորման և շարունակական բարելավման գործընթացների համար:

1.1. Բարձրագույն կրթության որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ

Չափորոշիչ 1. Որակի ապահովման քաղաքականություն

Բարձրագույն կրթության հաստատությունները պետք է ունենան ՈԱ քաղաքականություն, որը հրապարակված է և հանդիսանում է հաստատության ռազմավարական կառավարման անբաժանելի մաս: Ներքին շահագրգիռ կողմերը պետք է մշակեն և իրականացնեն այդ քաղաքականությունը համապատասխան գործընթացների միջոցով՝ ներգրավելով նաև արտաքին շահագրգիռ կողմերին:

Ուղենիշներ

1. Քաղաքականությունները և գործընթացները հանդիսանում են հաստատության ՈԱ համակարգի հիմնական հենասյուները, որոնք ձևավորում են շարունակական բարելավման շրջափուլ և նպաստում հաստատության հաշվետվողականությանը:

[4] ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, **Եվրոպական բարձրագույն կրթական տարածք և Բոլոնիայի գործընթաց**՝ https://www.hesc.am/hy/file/evropakan-bardzraguyn-krtakan-taratsk-yev-boloniayi-gorts-ntats/

Դրանք աջակցում են որակի մշակույթի ձևավորմանը, որի շրջանակում բոլոր ներքին շահագրգիռ կողմերը ստանձնում են պատասխանատվություն ՈԱ համար և մասնակցում ՈԱ գործընթացներին: Այդ նպատակով քաղաքականությունը պետք է ունենա պաշտոնական կարգավիճակ և լինի հրապարակայնորեն հասանելի:

2. ՈԱ քաղաքականությունն առավել արդյունավետ է, երբ այն արտացոլում է գիտահետազոտական գործունեության, ուսուցման ու դասավանդման միջև փոխկապակցվածությունը, ինչպես նաև հաշվի է առնում այն ազգային միջավայրը, որտեղ գործում է հաստատությունը, ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և ռազմավարական ուղղվածությունը:

Նման քաղաքականությունը աջակցում է՝

2.1. ՈԱ համակարգի կազմակերպմանը,

2.2. ամբիոնների, ֆակուլտետների, կրթական ստորաբաժանումների, ինչպես նաև հաստատության ղեկավարության, դասախոսական կազմի և ուսանողների կողմից ՈԱ գործընթացներում իրենց պատասխանատվության ստանձնմանը,

2.3. ակադեմիական ազնվության և ազատության պահպանմանը, ինչպես նաև ակադեմիական անազնվության դեպքերի կանխմանը,

2.4. անհանդուրժողականության և խտրականության ցանկացած դրսևորումների բացառմանն ուսանողների և աշխատակիցների նկատմամբ,

2.5. արտաքին շահագրգիռ կողմերի ներգրավմանը ՈԱ գործընթացներում:

3. Քաղաքականության իրականացումն ապահովվում է ՈԱ ներքին գործընթացների միջոցով, որոնք հնարավորություն են տալիս մասնակցություն ապահովել հաստատության գործունեության բոլոր ոլորտներում: Քաղաքականության իրականացման, մշտադիտարկման և վերանայման մեխանիզմները սահմանվում են հաստատության կողմից:

4. ՈԱ քաղաքականությունը նաև ընդգրկում է հաստատության գործունեության այն ոլորտները, որոնք փոխանցված են այլ կազմակերպությունների կամ իրականացվում են դրանց կողմից:

Չափորոշիչ 2. Կրթական ծրագրերի մշակում և հաստատում

Բարձրագույն կրթության հաստատությունները պետք է ունենան ՄԿԾ-ների մշակման և հաստատման հստակ գործընթացներ: ՄԿԾ-ները պետք է նախագծվեն այնպես, որ ապահովեն սահմանված նպատակների իրականացումը, ներառյալ նախատեսված ուսումնառության արդյունքները: ՄԿԾ-ի իրականացման արդյունքում շնորհվող որակավորումը պետք է հստակ սահմանված լինի՝ համապատասխան բարձրագույն կրթության ազգային որակավորումների շրջանակի համապատասխան մակարդակին և, համապատասխանաբար, Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակին:

Ուղենիշներ

ՄԿԾ-ները հանդիսանում են բարձրագույն կրթության հաստատությունների ուսուցման հիմնական առաքելության առանցքը: Դրանք ապահովում են ուսանողների համար ինչպես ակադեմիական գիտելիքների, այնպես էլ հմտությունների ձևավորում, ներառյալ փոխանցելի կարողությունները, որոնք նպաստում են նրանց անձնական զարգացմանը և կիրառելի են հետագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Մասնագիտական կրթական ծրագրերը՝

1. մշակվում են ընդհանուր նպատակների հիման վրա, որոնք համահունչ են հաստատության ռազմավարությանը և ունեն հստակ ձևակերպված ուսումնառության արդյունքներ,
2. նախագծվում են ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ,
3. հիմնվում են արտաքին փորձագիտական կարծիքների վրա,
4. արտացոլում են Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված բարձրագույն կրթության չորս հիմնական նպատակները,
5. նախագծվում են այնպես, որ ապահովեն ուսանողների առաջընթացի սահուն ընթացքը,
6. սահմանում են ուսանողի ակնկալվող ուսումնական բեռնվածությունը (օրինակ՝ ԵԲԿՏ-ի կրեդիտներով),

7. ներառում են պրակտիկայի հնարավորություններ՝ անհրաժեշտության դեպքում,
8. ենթարկվում են հաստատության կողմից սահմանված պաշտոնական հաստատման գործընթացի:

Չափորոշիչ 3. Ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդում և գնահատում

Բարձրագույն կրթության հաստատությունները պետք է ապահովեն, որ ՄԿԾ-ներն իրականացվեն այնպես, որ խրախուսեն ուսանողների ակտիվ մասնակցությունն ուսումնառության գործընթացին, իսկ ուսանողների գնահատումը պետք է արտացոլի այդ մոտեցումը:

Ուղենիշներ

Ուսանողակենտրոն ուսուցումն ու դասավանդումը կարևոր դեր ունեն ուսանողների մոտիվացիայի բարձրացման, ինքնավերլուծության և ուսումնառության գործընթացում նրանց ներգրավվածության խթանման գործում: Սա ենթադրում է ՄԿԾ-ների նախագծման, իրականացման և ուսումնառության արդյունքների գնահատման գործընթացների մանրակրկիտ պլանավորում:

Ուսանողակենտրոն ուսուցման և դասավանդման իրականացումը՝

1. հարգում և հաշվի է առնում ուսանողների բազմազանությունը և նրանց կարիքները՝ ապահովելով ճկուն ուսումնառության ուղիներ,
2. կիրառվում են ուսուցման և դասավանդման տարբեր ձևեր՝ ըստ անհրաժեշտության,
3. օգտագործվում են բազմազան մանկավարժական մեթոդներ,
4. պարբերաբար գնահատվում և կատարելագործվում են ուսուցման ձևերն ու մեթոդները,
5. խրախուսվում է ուսանողի ինքնուրույնությունը՝ միաժամանակ ապահովելով դասախոսի կողմից անհրաժեշտ ուղղորդում և աջակցություն,
6. խթանվում է փոխադարձ հարգանքն ուսանող-դասախոս հարաբերություններում,

7. ապահովվում են համապատասխան ընթացակարգեր ուսանողների բողոքների քննարկման համար:

Հաշվի առնելով գնահատման կարևորությունն ուսանողների առաջընթացի և հետագա մասնագիտական գործունեության համար՝ գնահատման որակի ապահովման գործընթացները պետք է ներառեն հետևյալը՝

1. գնահատողները պետք է ծանոթ լինեն քննության և գնահատման գործող մեթոդներին և ստանան աջակցություն իրենց մասնագիտական կարողությունների զարգացման համար,
2. գնահատման չափանիշները, մեթոդները և գնահատման կարգը պետք է նախապես հրապարակվեն,
3. գնահատումը պետք է հնարավորություն տա ուսանողներին ցույց տալու, թե որքանով են հասել նախատեսված ուսումնառության արդյունքներին, և նրանց պետք է տրամադրվի հետադարձ կապ՝ անհրաժեշտության դեպքում ուղեկցված խորհրդատվությամբ,
4. հնարավորության դեպքում գնահատումը պետք է իրականացվի մեկից ավելի գնահատողների կողմից,
5. գնահատման կանոնակարգերը պետք է հաշվի առնեն մեղմացուցիչ հանգամանքները,
6. գնահատումը պետք է լինի հետևողական, արդար և իրականացվի սահմանված ընթացակարգերին համապատասխան,
7. պետք է գործի ուսանողների բողոքարկման պաշտոնական ընթացակարգ:

<u>Չափորոշիչ 4. Ուսանողների ընդունելություն, առաջընթաց, ճանաչում և վկայագրում</u>

Բարձրագույն կրթության հաստատությունները պետք է հետևողականորեն կիրառեն նախապես սահմանված և հրապարակված կանոնակարգեր, որոնք ընդգրկում են ուսանողի «կյանքի շրջափուլի» բոլոր փուլերը՝ ներառյալ ընդունելությունը, առաջընթացը, ճանաչումը և վկայագրումը:

<u>Ուղենիշներ</u>

Ուսանողների ակադեմիական առաջընթացի ապահովման համար անհրաժեշտ պայմանների և աջակցության տրամադրումը բխում է ինչպես ուսանողների, այնպես էլ ՄԿԾ-ների, հաստատությունների և ամբողջ կրթական համակարգի շահերից: Կարևոր է ունենալ ընդունելության, ճանաչման և ուսումնառության ավարտի ընթացակարգեր, հատկապես այն դեպքերում, երբ ուսանողները շարժունակ են տարբեր կրթական համակարգերի ներսում և դրանց միջև:

Կարևոր է, որ ընդունելության գործընթացները և չափանիշները կիրառվեն հետևողական և թափանցիկ ձևով: Հաստատությունները պետք է ապահովեն նաև ուսանողների պատշաճ ծանոթացում հաստատությանը և ՄԿԾ-ին:

Հաստատությունները պետք է ներդնեն գործընթացներ և գործիքներ՝ ուսանողների առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշտադիտարկման և վերլուծության, ինչպես նաև համապատասխան գործողությունների իրականացման համար:

Բարձրագույն կրթության որակավորումների, ուսումնառության ժամանակահատվածների և նախնական ուսումնառության ճանաչումը, ներառյալ ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչումը, կարևոր պայմաններ են ուսանողների առաջընթացի ապահովման և շարժունակության խթանման համար: Արդյունավետ ճանաչման գործընթացները հիմնվում են՝

1. Լիսաբոնի որակավորումների ճանաչման կոնվենցիայի վրա,
2. այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների, որակի ապահովման գործակալությունների և ազգային որակի ապահովման կենտրոնի հետ համագործակցության վրա՝ ապահովելու համար ճանաչման միասնական և համահունչ մոտեցում երկրի ներսում:

Ուսումնառության ավարտը հանդիսանում է ուսանողի կրթական ճանապարհի ամփոփումը: Ուսանողներին պետք է տրամադրվեն համապատասխան փաստաթղթեր, որոնք պարզաբանում են ստացված որակավորումը՝ ներառյալ ձեռք բերված ուսումնառության արդյունքները, ինչպես նաև ուսումնառության համատեքստը, մակարդակը, բովանդակությունը և կարգավիճակը:

Չափորոշիչ 5. Դասախոսական կազմ

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ապահովեն իրենց դասախոսների մասնագիտական կարողունակությունը: Ուսումնական հաստատությունները պետք է կիրառեն արդար և թափանցիկ գործընթացներ դասախոսական կազմի հավաքագրման և զարգացման համար:

Ուղենիշներ

Դասախոսի դերը վճռորոշ է ուսանողական փորձառության ձևավորման և գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերման ապահովման գործում: Ուսանողական համակազմի բազմազանության աճը և ուսումնառության արդյունքների վրա ավելի մեծ ուշադրությունը պահանջում են ուսանողակենտրոն ուսուցում և դասավանդում, որի արդյունքում փոփոխվում է նաև դասախոսի դերը:

Բարձրագույն կրթության հաստատությունները կրում են առաջնային պատասխանատվություն իրենց դասախոսական կազմի ՈԱ համար և պարտավոր են ստեղծել աջակցող միջավայր, որը հնարավորություն կտա արդյունավետ իրականացնել նրանց մասնագիտական գործունեությունը:

Այդպիսի միջավայրը՝

1. սահմանում և կիրառում է հստակ, թափանցիկ և արդար գործընթացներ դասախոսական կազմի հավաքագրման և աշխատանքային պայմանների ապահովման համար՝ կարևորելով դասավանդման դերը,
2. ապահովում է դասախոսների մասնագիտական զարգացման հնարավորությունները և խրախուսում դրանց իրականացումը,
3. խթանում է գիտահետազոտական գործունեությունը՝ ամրապնդելով կրթության և հետազոտության միջև կապը,
4. խրախուսում է դասավանդման մեթոդների նորարարությունը և նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Չափորոշիչ 6. Ուսումնական ռեսուրսներ և ուսանողների աջակցություն

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ապահովեն համապատասխան ֆինանսավորում ուսուցման և ուսումնառության գործունեության համար, ինչպես նաև երաշխավորեն բավարար և հասանելի ուսումնական ռեսուրսների և ուսանողական աջակցության ծառայությունների առկայությունը:

Ուղենիշներ

Բարձրագույն կրթություն տրամադրելու համար հաստատությունները տրամադրում են ուսանողների ուսումնառությունն աջակցող բազմաբնույթ ռեսուրսներ: Դրանք կարող են ներառել ինչպես նյութական ռեսուրսներ՝ գրադարաններ, ուսումնական տարածքներ և տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքներ, այնպես էլ մարդկային աջակցություն՝ դասախոսների, խորհրդատուների և այլ մասնագետների միջոցով: Աջակցող ծառայությունների դերը հատկապես կարևոր է ուսանողների շարժունակության ապահովման տեսանկյունից՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

Ռեսուրսների բաշխման, պլանավորման և տրամադրման գործընթացում պետք է հաշվի առնվեն ուսանողական համակազմի բազմազան կարիքները (օրինակ՝ տարիքային առանձնահատկություն, հեռակա ուսուցում, աշխատող, միջազգային ուսանողներ, հաշմանդամություն), ինչպես նաև ուսանողակենտրոն ուսուցման և ճկուն ուսումնառության ձևերի տարածումը:

Աջակցող ծառայությունները և ենթակառուցվածքները կարող են կազմակերպվել տարբեր ձևերով՝ կախված հաստատության առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ներքին ՈԱ համակարգը պետք է երաշխավորի, որ բոլոր ռեսուրսները նպատակահարմար են, հասանելի և արդյունավետ, իսկ ուսանողները պատշաճ տեղեկացված են իրենց հասանելի ծառայությունների մասին:

Աջակցող ծառայությունների մատուցման գործընթացում կարևոր դեր ունեն վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը, ուստի անհրաժեշտ է, որ նրանք լինեն համապատասխան որակավորում ունեցող և ունենան իրենց մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման հնարավորություններ:

Չափորոշիչ 7. Տեղեկատվության կառավարում

Բարձրագույն կրթության հաստատությունները պետք է ապահովեն համապատասխան տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և օգտագործումը՝ իրենց կրթական ծրագրերի և գործունեության այլ ոլորտների արդյունավետ կառավարման համար:

Ուղենիշներ

Հուսալի տվյալները կարևոր նշանակություն ունեն տեղեկացված որոշումների կայացման համար, ինչպես նաև թույլ են տալիս գնահատել, թե որ գործընթացներն են արդյունավետ և որոնք կարիք ունեն բարելավման: Կրթական ծրագրերի և այլ գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության արդյունավետ գործընթացները հանդիսանում են ներքին ՈԱ համակարգի կարևոր բաղադրիչ:

Հավաքագրվող տեղեկատվության ծավալը և բովանդակությունը որոշ չափով կախված են հաստատության տեսակից և առաքելությունից: Կարևոր նշանակություն ունեն, մասնավորապես՝

1. հիմնական կատարողական ցուցանիշները,
2. ուսանողական համակազմի բնութագիրը,
3. ուսանողների առաջընթացը,
4. ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերից,
5. հասանելի ուսումնական ռեսուրսները և ուսանողական աջակցությունը,
6. շրջանավարտների կարիերայի հետագա ուղիները:

Տեղեկատվության հավաքագրման համար կարող են կիրառվել տարբեր մեթոդներ: Կարևոր է, որ ինչպես ուսանողները, այնպես էլ աշխատակիցները ներգրավված լինեն տեղեկատվության տրամադրման, վերլուծության և հետագա գործողությունների պլանավորման գործընթացներում:

Չափորոշիչ 8. Հանրային տեղեկատվություն

Հաստատությունները պետք է հրապարակեն իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ կրթական ծրագրերը, որը պետք է լինի հստակ, ճշգրիտ, օբյեկտիվ, արդիական և հասանելի:

Ուղենիշներ

Հաստատությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է ինչպես ապագա և գործող ուսանողների, այնպես էլ շրջանավարտների, այլ շահագրգիռ կողմերի և լայն հանրության համար:

Այդ նպատակով հաստատությունները պետք է տրամադրեն տեղեկատվություն իրենց գործունեության վերաբերյալ, ներառյալ՝

1. առաջարկվող կրթական ծրագրերի և դրանց ընդունելության չափանիշների,
2. ծրագրերի նախատեսված ուսումնառության արդյունքների,
3. շնորհվող որակավորումների,
4. կիրառվող ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների,
5. առաջադիմության ցուցանիշների,
6. ուսանողների համար հասանելի ուսումնառության հնարավորությունների,
7. շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները:

Չափորոշիչ 9. Կրթական ծրագրերի շարունակական մշտադիտարկում և պարբերական վերանայում

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է իրականացնեն կրթական ծրագրերի շարունակական մշտադիտարկում և պարբերական վերանայում՝ ապահովելով դրանց համապատասխանությունը սահմանված նպատակներին և ուսանողների ու հասարակության կարիքներին: Այս վերանայումները պետք է նպաստեն ծրագրերի շարունակական բարելավմանը, իսկ դրանց արդյունքներով նախատեսված կամ իրականացված գործողությունները պետք է հաղորդակցվեն բոլոր շահագրգիռ կողմերին:

Ուղենիշներ

Կրթական ծրագրերի կանոնավոր մշտադիտարկումը, վերանայումը և արդիականացումը նպատակ ունեն ապահովել ՄԿԾ-ների համապատասխանությունը ժամանակակից պահանջներին և ստեղծել արդյունավետ ու աջակցող ուսումնառության միջավայր ուսանողների համար:

Վերանայման գործընթացը ներառում է՝

1. ծրագրի բովանդակության գնահատումը տվյալ մասնագիտական ոլորտում վերջին գիտական ձեռքբերումների տեսանկյունից,
2. հասարակության փոփոխվող կարիքների վերլուծությունը,
3. ուսանողների ուսումնական բեռնվածության, առաջընթացի և ավարտական ցուցանիշների գնահատումը,
4. ուսանողների գնահատման ընթացակարգերի արդյունավետության գնահատումը,
5. ուսանողների ակնկալիքների, կարիքների և բավարարվածության ուսումնասիրությունը,
6. ուսումնառության միջավայրի և աջակցության ծառայությունների համապատասխանության գնահատումը ՄԿԾ-ի նպատակներին:

ՄԿԾ-ները պարբերաբար վերանայվում և արդիականացվում են՝ ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ: Հավաքագրված տեղեկատվությունը ենթարկվում է վերլուծության, որի հիման վրա ծրագրերը բարելավվում և համապատասխանեցվում են ժամանակակից պահանջներին: Վերանայված ՄԿԾ-ների բնութագրերը հրապարակվում են:

<u>Չափորոշիչ 10. Պարբերական արտաքին որակի ապահովում</u>

Բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է պարբերական հիմունքներով ենթարկվեն արտաքին ՈԱ գործընթացների՝ համապատասխան Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ՈԱ չափորոշիչներին և ուղենիշներին (ՈԱԵՉՈ):

<u>Ուղենիշներ</u>

Արտաքին ՈԱ-ը հնարավորություն է տալիս գնահատելու հաստատությունների ներքին ՈԱ համակարգերի արդյունավետությունը, խթանում է բարելավումները և ապահովում է նոր մոտեցումների ու հեռանկարների ներմուծումը հաստատության գործունեության մեջ: Այն նաև ապահովում է տեղեկատվություն հանրության համար՝ հաստատության գործունեության որակի վերաբերյալ վստահություն ձևավորելու նպատակով:

Բարձրագույն կրթության հաստատությունները մասնակցում են պարբերական արտաքին ՈԱ գործընթացներին՝ հաշվի առնելով իրենց գործունեության իրավական շրջանակի պահանջները: Կախված այդ շրջանակից՝ արտաքին ՈԱ-ը կարող է ունենալ տարբեր ձևեր և իրականացվել կազմակերպական տարբեր մակարդակներում (օրինակ՝ ՄԿԾ-ի, ֆակուլտետի կամ ամբողջ հաստատության մակարդակով):

ՈԱ-ը շարունակական գործընթաց է, որը չի ավարտվում արտաքին գնահատման արդյունքներով, հաշվետվությամբ կամ դրանց հիման վրա իրականացված գործողություններով: Այդ պատճառով հաստատությունները պետք է ապահովեն, որ նախորդ արտաքին գնահատումից հետո արձանագրված առաջընթացը հաշվի առնվի հաջորդ արտաքին ՈԱ գործընթացներին նախապատրաստվելիս:

1.2. Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման եվրոպական չափորոշիչներ

Չափորոշիչ 1. Ներքին որակի ապահովման դիտարկում

Արտաքին ՈԱ-ը պետք է գնահատի **ՈԱԵՉՈ-ի վերաբերող 1.1. ենթաբաժնում** ներկայացված ներքին ՈԱ գործընթացների արդյունավետությունը:

Ուղենիշներ

Բարձրագույն կրթության ՈԱ-ը հիմնվում է հաստատությունների պատասխանատվության վրա՝ իրենց կողմից իրականացված ՄԿԾ-ների և գործունեության բոլոր ոլորտների որակի համար: Ուստի կարևոր է, որ արտաքին ՈԱ-

ը ճանաչի և աջակցի հաստատությունների այդ պատասխանատվությանը: Ներքին և արտաքին ՈԱ կապը ապահովելու համար արտաքին գործընթացները ներառում են **ձեռնարկի 1.1. ենթաբաժնի,** չափորոշիչների դիտարկում՝ կախված կիրառվող մեթոդաբանությունից:

Չափորոշիչ 2. Նպատակին համապատասխան մեթոդաբանության մշակում

Արտաքին ՈԱ գործընթացները պետք է նախագծվեն այնպես, որ ապահովեն իրենց նպատակների և խնդիրների իրականացումը՝ հաշվի առնելով համապատասխան կարգավորումները: Դրանց մշակման և շարունակական բարելավման գործընթացում պետք է ներգրավվեն շահագրգիռ կողմերը:

Ուղենիշներ

Արտաքին ՈԱ արդյունավետությունն ու օբյեկտիվությունը պահանջում են հստակ սահմանված նպատակներ՝ համաձայնեցված շահագրգիռ կողմերի կողմից: Գործընթացների նախագծումն ու իրականացումը պետք է՝

1. հաշվի առնի հաստատությունների վրա դրվող ծանրաբեռնվածությունն ու ծախսերը,
2. աջակցի որակի բարելավմանը,
3. հնարավորություն տա հաստատություններին ցույց տալ իրենց առաջընթացը,
4. ապահովի արդյունքների և հետագա քայլերի հստակ ներկայացում:

Համակարգը կարող է լինել ավելի ճկուն, եթե հաստատությունները կարողանում են ապացուցել իրենց ներքին ՈԱ արդյունավետությունը:

Չափորոշիչ 3. Գործընթացների իրականացում

Արտաքին ՈԱ գործընթացները պետք է լինեն հուսալի, օգտակար, նախապես սահմանված, հետևողականորեն իրականացվող և հրապարակված: Դրանք ներառում են՝

1. ինքնավերլուծություն կամ համարժեք գործընթաց,
2. արտաքին գնահատում (սովորաբար՝ տեղում այցով),
3. գնահատման հաշվետվություն,

4. հետևողական հետագա գործողություններ:

Ուղենիշներ

Արտաքին ՈԱ գործընթացների մասնագիտական, հետևողական և թափանցիկ իրականացումն ապահովում է դրանց ընդունելիությունն ու ազդեցությունը: Հաստատությունները ներկայացնում են ինքնավերլուծություն կամ այլ փաստաթղթեր՝ ապացուցողական նյութերով, որոնք լրացվում են շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցներով՝ տեղում այցի ընթացքում: Արդյունքներն ամփոփվում են արտաքին փորձագետների խմբի կողմից կազմված հաշվետվության մեջ:

Արտաքին ՈԱ-ը չի ավարտվում հաշվետվությամբ՝ այն ներառում է նաև հետագա գործողություններ, որոնց բնույթը կախված է կիրառվող համակարգից:

Չափորոշիչ 4. Փորձագիտական խմբի ձևավորում

Արտաքին ՈԱ-ը պետք է իրականացվի արտաքին փորձագետների խմբերի կողմից՝ ներառյալ առնվազն մեկ ուսանող:

Ուղենիշներ

Արտաքին ՈԱ հիմքում ընկած է փորձագետների փորձառությունը՝ ներառյալ ակադեմիական, ուսանողական և այլն:

Փորձագետները՝

1. ունեն համապատասխան հմտություններ և կարողություններ,
2. ստանում են անհրաժեշտ խորհրդատվություն:

Ապահովվում է նրանց անկախությունը՝ շահերի բախման բացառման մեխանիզմների միջոցով: Միջազգային փորձագետների ներգրավումը ցանկալի է՝ գործընթացի որակը բարձրացնելու համար:

Չափորոշիչ 5. Գնահատման չափանիշներ

Արտաքին ՈԱ արդյունքում կայացվող բոլոր որոշումները պետք է հիմնվեն հրապարակված չափանիշների վրա և կիրառվեն հետևողականորեն:

Ուղենիշներ

Արտաքին գնահատման արդյունքները կարևոր ազդեցություն ունեն հաստատությունների վրա: Դրանք պետք է հիմնված լինեն նախապես սահմանված, հրապարակված և ապացույցների վրա: Արդյունքները կարող են ունենալ տարբեր ձևեր՝ առաջարկություններ, գնահատականներ կամ պաշտոնական որոշումներ:

Չափորոշիչ 6. Հաշվետվության ներկայացում

Փորձագետների ամբողջական հաշվետվությունները պետք է հրապարակվեն՝ լինելով հստակ և հասանելի: Եթե դրանց հիման վրա կայացվում է պաշտոնական որոշում, այն նույնպես պետք է հրապարակվի:

Ուղենիշներ

Հաշվետվությունը հիմք է հանդիսանում հաստատության հետագա գործողությունների համար և հասանելի հանրությանը: Այն պետք է լինի հստակ և ընդգրկի՝

1. հաստատության գործունեության նկարագրություն,
2. արտաքին ՈԱ գործընթացի նկարագրություն,
3. վերլուծություն,
4. եզրակացություններ,
5. լավ փորձի օրինակներ,
6. առաջարկություններ:

Չափորոշիչ 7. Բողոքարկման կարգ

Բողոքների և բողոքարկման գործընթացները պետք է հստակ սահմանված լինեն և փոխանցվեն հաստատություններին:

Ուղենիշներ

Արտաքին ՈԱ գործընթացները պետք է լինեն բաց և հաշվետու: Հաստատությունները պետք է հնարավորություն ունենան ներկայացնելու բողոքներ կամ բողոքարկումներ:

Բողոքարկման գործընթացը թույլ է տալիս վիճարկել որոշումը, եթե այն հիմնավորված չէ կամ գործընթացը չի իրականացվել օբյեկտիվ:

Բողոքների գործընթացը հնարավորություն է տալիս արտահայտելու դժգոհություն գործընթացի ընթացքի վերաբերյալ:

Այս գործընթացները պետք է իրականացվեն հստակ և հետևողական ձևով՝ ապահովելով արդարություն և վստահություն համակարգի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2.
ՀՀ-ՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2.1. «Որակ» հասկացության սահմանումը

ՀՀ կրթական համակարգում ընդունված է կրթության որակի այն սահմանումը, որը բնութագրում է որակը՝ «որպես համապատասխանություն սահմանված նպատակներին»: Այս մոտեցման համաձայն՝ որակի արտաքին գնահատման գործընթացներում որոշվում է, թե որքանով են հաստատության տրամադրած կրթական ծառայությունները կամ ուսանողի ձեռք բերած կրթության արդյունքները համապատասխանում սահմանված նպատակներին: Նման սահմանումը խթանում է հաստատություններին իրենց առաքելության մեջ ներկայացնել հստակ նպատակներ, որոնց հասնելու աստիճանով է գնահատվելու և ներկայացվելու որակը: Որակի արտաքին գնահատում իրականացնող կառույցը հատուկ ուշադրություն է դարձնում ուսումնական հաստատության սահմանած նպատակների համապատասխանությանը ՀՀ կառավարության կողմից հաստատված որակի ապահովման չափանիշներին ու ոլորտի զարգացման գերակա ուղղություններին, ինչպես նաև հասարակության պահանջներին: Այս մոտեցումը ենթադրում է, որ առաջին հերթին պետք է սահմանվեն մասնագիտական կրթության նպատակները և խնդիրները, իսկ կրթության արդյունքները և ծառայությունները պետք է բավարարեն շահակիցների կարիքները և պահանջները: Այն նաև ենթադրում է, որ շահակիցները պետք է հստակ ձևակերպեն իրենց կարիքներն ու պահանջները:

Մասնագիտական կրթության նպատակները հատատության առաքելության մեջ ներկայացվում են ընդհանրական տեսքով և մասնավորեցվում ակադեմիական մակարդակում՝ մասնագիտության կրթական ծրագրի նպատակների և ակնկալվող ուսումնառության արդյունքների մեջ:

Ուսումնական հաստատությունը ներկայացնում է, թե ինչպես է իրականացնում իր առաքելությունը և արտաքին գնահատողին հիմնավորում է իրականացման

արդյունավետությունը, իսկ արտաքին գնահատողները հավաստում են արդյունքները երրորդ կողմին՝ շահակիցներին:

Մասնագիտական կրթության որակը սերտ կապված է կրթական ծրագրերի իրականացման՝ դասավանդման արդյունավետության և գործունակության հետ: Գործունակությունը կապված է կրթական ծրագրերի նպատակների, իսկ արդյունավետությունը՝ խնդիրների իրականացման համար կիրառվող ռեսուրսների հետ: Նպատակների համապատասխանությունը գնահատելիս որակի արտաքին ապահովման կառույցը հատուկ ուշադրություն է դարձնում նպատակների համապատասխանությանը ՈԱԾ-ին, պետական կրթական չափորոշիչներին ու գերակա ուղղություններին, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին: Վերլուծվում է նաև, թե որքանով են նպատակներն իրականացվել, և ինչ չափով է երաշխավորված գործընթացների շարունակականությունը: Մասնագիտական կրթության որակի հավաստումը որակի ապահովման և շարունակական բարելավման գործընթաց է մասնագիտական կրթությունն ուսանողների, շահակիցների և ամբողջ հասարակության կարիքներին համապատասխանեցնելու համար: Որակի ապահովումը հետապնդում է երկու հիմնական նպատակ՝ **հաշվետվողականություն և բարելավում:**

Այդ նպատակների իրականացումը նպաստում է ուսումնական հաստատության գործունեության նկատմամբ վստահության ձևավորմանը:

Այսպիսով, ուսումնական հաստատությունը պլանավորում է իր անելիքները, իրականացնում դրանք, այնուհետև հիմնավորում է դրանց արդյունավետությունը: Արտաքին գնահատողները՝ ի դեմս գործընկեր-փորձագետների, հավաստում են արդյունքները երրորդ կողմին՝ շահակիցներին, և խորհրդատվություններով նպաստում են հաստատության գործունության բարելավմանը:

2.2. Որակի ապահովման համակարգը ՀՀ-ում

Որակի ապահովման համակարգն **ուսումնական հաստատության գործունեության պլանավորման, իրականացման, գնահատման և շարունակական**

բարելավման համակարգված գործընթացների ամբողջությունն է՝ ուղղված կրթության որակի ապահովմանը և շարունակական զարգացմանը:

ՀՀ-ում կրթության որակի ապահովումը պարտադիր գործընթաց է բոլոր ՄՈՒՀ-երի համար՝ անկախ դրանց կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից:

Որակի ներքին ապահովման գործընթացները պետք է ուղղված լինեն և աջակցեն ուսումնական հաստատությունում որակի մշակույթի ձևավորմանը, զարգացմանը և տարածմանը: Որակի մշակույթ ունեցող կազմակերպություններում ծառայություն մատուցող և ծառայությունից օգտվող յուրաքանչյուր անձ պատասխանատու է մյուսների համար՝ փոխհամագործակցելով նրանց հետ: Որակի մշակույթը ոչ միայն ՈՍ համար պատասխանատուների, այլև կազմակերպության բոլոր աշխատակիցների պատասխանատվությունն է:

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ստորաբաժանում անմիջական պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքի որակի համար:

Որակի մշակույթի առկայության դեպքում գործընթացի յուրաքանչյուր փուլում գնահատվում է արդյունավետությունը և հետադարձ կապ է ապահովվում, ինչի շնորհիվ վերջնարդյունքի ստուգման հատուկ անհրաժեշտություն չի առաջանում:

Միայն վերջնարդյունքն ստուգելով՝ դժվար է բացահայտել, թե որ օղակում է տեղի ունեցել խնդիրը, հետևաբար դժվար է մշակել բարելավման քայլերը: Ուսումնական հաստատությունը, որտեղ որակի ապահովման գործընթացները միտված են որակի մշակույթի ձևավորմանը, կարող է բոլոր մակարդակներում ցուցադրել.

1. թափանցիկ և ակտիվ գործունեություն, պատասխանատու վերաբերմունք որակի նկատմամբ,
2. քննադատական ինքնավերլուծություն իրականացնելու պատրաստակամություն,
3. ներքին կանոնակարգեր՝ հստակ ընթացակարգերով և դրանց հետևողական իրականացմամբ,
4. հանրամատչելի և հստակ սահմանված պատասխանատվություններ որակի վերահսկման և գնահատման համար,

5. արտաքին և ներքին շահակիցներից կարծիք ստանալու ձգտում,
6. լավագույն փորձի բացահայտման և տարածման ձգտում,
7. խնդիրների լուծման համար տեղեկատվության վրա հիմնված արդյունավետ և համապատասխան գործողությունների ձեռնարկում:

Որակի ապահովումը կազմակերպության գործունեությունը բարելավելու և զարգացնելու պաշտոնապես ընդունված համակարգ է ՈԱՇ-ին, պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին համապատասխանության նպատակով:

Հիմնական գործընթացները ձևակերպված են Որակի ապահովման ՀՀ շրջանակի սահմաններում և հիմնված են ՈԱԵՉՈԻ-ի վրա:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ՀՀ շրջանակը հիմնված է ԵԲԿՏ-ում որակի ապահովման հետևյալ չորս սկզբունքների վրա.

1. մասնագիտական ուսումնական հաստատություններն են կրում հիմնական պատասխանատվությունն իրենց տրամադրած կրթության որակի և նրա ապահովման համար,
2. որակի ապահովումն արձագանքում է բարձրագույն կրթության համակարգերի, ուսումնական հաստատությունների, կրթական ծրագրերի և ուսանողների բազմազանությանը,
3. որակի ապահովումն աջակցում է որակի մշակույթի ձևավորմանը,
4. որակի ապահովումը հաշվի է առնում ուսանողների, բոլոր այլ շահակիցների և հանրության կարիքներն ու սպասելիքները:

Հայաստանում մասնագիտական կրթության համար մշակված որակի ապահովման ամբողջական շրջանակն ընդգրկում է չորս տարբեր գործընթացներ.

1. ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովում,
2. ՄՈՒՀ-երի որակի արտաքին ապահովում,
3. որակի արտաքին ապահովման կառույցի ճանաչում միջազգային կազմակերպությունների կողմից,
4. կրթության ոլորտում տրամադրվող ծառայությունների որակի վերաբերյալ տեղեկատվության ապահովում:

2.2.1. Որակի ներքին ապահովում

ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովումը Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի հիմնական տարրերից է:

Առաջնային կարևորություն ունի ուսումնական հաստատության որակի ներքին ապահովման քաղաքականությունը, որը պետք է արտացոլի որակի ներքին ապահովման համակարգի հիմնական մեխանիզմները և նպաստի հաստատության հաշվետվողականությանը: Այն կօգնի նաև որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը՝ նպաստելով արտաքին և ներքին շահակիցների լիարժեք մասնակցությանը որակյալ կրթության ապահովման գործում:

ՈԱ քաղաքականությունը հիմնված է որակի շարունակական բարելավման սկզբունքի վրա: Որակի շարունակական բարելավումն ընդգրկում է չորս հիմնական գործողություն, որակի համապարփակ կառավարման շարժիչ սկզբունքը՝ **Դեմինգի շրջափուլը (ցիկլը՝** անգլերեն՝ Plan-Do-Check-Act), բառացի՝ պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում՝ ՊԻԳԲ) գործընթացը[5].

1. **պլանավորում՝** խնդիրների սահմանում, հնարավոր լուծումների ձևակերպում,
2. **իրականացում՝** սահմանված պլանի հիման վրա միջոցառումների իրականացում,
3. **գնահատում՝** իրականացված գործողությունների ընթացիկ գնահատում,
4. **բարելավում՝** արդյունքների ամփոփում և հետագա քայլերի վերանայում:

Հաշվետվողականության համատեքստում որակի ներքին ապահովումը կիրառվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ: Ուսանողները,

[5] **Դեմինգի շրջափուլ՝ ցիկլ**, **PDCA** (անգլ.՝ Plan-Do-Check-Act), բառացի՝ պլանավորում-կատարում-ստուգում-գործում) կամ որոշումների ընդունման անընդհատ կրկնվող գործընթաց, որն օգտագործվում է որակի կառավարման բնագավառում: Դեմինգի շրջափուլը /ցիկլը/ հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու դեպի բարելավում տանող ճանապարհին: Այն հայտնի է նաև որպես՝ «Շյուհարտի ցիկլ», «PDCA ցիկլ» կամ «PDSA ցիկլ» անվանումներով: Դեմինգն այն անվանում է «Շյուհարտի ցիկլ», քանի որ իր մտահղացումը, ըստ էության, բխել է Շյուհարտի 1939 թվականին հրապարակված գրքից:

շրջանավարտները, գործատուները և հասարակությունն ուսումնական հաստատություններից ակնկալում են կրթական ծառայությունների նպատակների իրականացում:

Որակի ապահովումը կարևորագույն գործիք է ՄՈՒՀ-ի գործունեության համար, որը երաշխավորում է հասարակության պահանջների և կարիքների բավարարումը: ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը և թափանցիկությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է որակի ներքին ապահովման ռազմավարության և գործընթացների արտաքին գնահատում:

Հավատարմագրման չափանիշներով սահմանված մակարդակին հասնելու համար ՄՈՒՀ-ի գործունեության բոլոր ոլորտներում և գործառույթներում պահանջվում է տեղեկատվական հոսքերի հստակեցում և ընթացակարգերի թափանցիկություն: ՄՈՒՀ-ի առաքելությունը և գործունեությունը կանոնակարգող բոլոր համապատասխան փաստաթղթերը պետք է լինեն հրապարակված և հասանելի դասախոսների, ուսանողների ու բոլոր շահակիցների համար:

Ուսումնական հաստատության համար կարևոր խնդիր է նաև ապահովել մասնագիտության կրթական ծրագրերի որակը: ՄՈՒՀ-երը պետք է ունենան կրթական ծրագրերի մշակման, հաստատման և մշտադիտարկման գործընթացներ: Կրթական ծրագրերը պետք է համահունչ լինեն ամբողջ հաստատության առաքելությանը և ունենան ուսումնառության սահմանված վերջնարդյունքներ:

Կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում կարևոր է բոլոր շահակիցների ներգրավվածությունը: Կրթական ծրագրի իրականացման կիզակետում ՄՈՒՀ-երը պետք է դիտարկեն ուսանողի ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ուսանողակենտրոն մոտեցումը հատկապես կարևոր է ուսանողների շահադրդման բարձրացման, ինչպես նաև ուսումնական գործընթացում նրանց ակտիվ ներգրավման տեսանկյունից: Բարձրորակ կրթություն ապահովելու գործում հատկապես կարևոր է դասախոսի դերը: Հետևապես ուսումնական հաստատությունները պետք է ունենան դասախոսական կազմի համալրման և մասնագիտական զարգացման թափանցիկ մեխանիզմներ:

Մեծ կարևորություն է տրվում նաև ուսանողների ընդունելության, առաջընթացի, որակավորման շնորհման և ճանաչման գործընթացներին և դրանք կանոնակարգող փաստաթղթերին: Կարևոր է, որ գործող կանոնակարգերը համապատասխանեն հաստատության առաքելությանը և նպատակներին:

2.2.2. Որակի արտաքին ապահովում

Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ.

1. **Հաշվետվողականություն և թափանցիկություն՝** որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափորոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտպանված են, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:
2. **Գնահատում՝** հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց է տալիս, թե ինչպես է հասնում հնարավորինս բարձր որակի՝ առկա ռեսուրսներն արդյունավետ օգտագործելով:
3. **Որակի բարելավում՝** հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացների արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով:

Ընդհանուր առմամբ, որակի արտաքին ապահովման նպատակն է հավաստել, որ ՄՈՒՀ-երը հետամուտ են հետևյալ հարցերի պատասխաններին.

1. արդյո՞ք ՄՈՒՀ-ն ունի որակի մշակույթ ձևավորող ընթացակարգեր, որոնք կիրառվում են հաստատության օղակներում և կրթական բոլոր ծրագրերի իրականացման ընթացքում,
2. արդյո՞ք ՄՈՒՀ-ը պարբերաբար մշտադիտարկում է որակական նպատակներին հասնելու իր առաջընթացը, մասնավորապես, կրթական ծառայությունների որակի ապահովումն ու հետագա բարելավումը,

3. արդյո՞ք որակի ապահովման ընթացակարգերի տվյալներն օգտագործվում են կրթական և վերապատրաստման ծառայությունների որակը բարձրացնելու և ուսանողների կարիքներին համապատասխանեցնելու նպատակով,
4. արդյո՞ք ՄՈՒՀ-ը մշտադիտարկում է ուսանողներին տրամադրվող ծառայությունների արդյունավետությունը,
5. արդյո՞ք ձեռնարկվում են որակի ապահովման գործընթացում հայտնաբերված բացթողումների վերացման համապատասխան գործողություններ,
6. արդյո՞ք շահակիցներին տրամադրվում է հաստատության և մասնագիտությունների կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն:

Որակի ապահովման ընթացակարգերի մշակման, իրականացման և վերանայման ընթացքում պետք է խուսափել միայն քանակական ցուցանիշներով սահմանափակվելուց: Անհրաժեշտ է ներառել նաև որակական գնահատման գործիքներ՝ ապահովելու գործընթացների և արդյունքների ամբողջական դիտարկումը:

ՀՀ-ում կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման միջոցով: Հավատարմագրման գործընթացը ՀՀ-ում իրականացնում է պետության կողմից լիազորված «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը:

Որակի արտաքին ապահովումը ՀՀ-ում իրականացվում է հաստատության որակի ներքին ապահովման գործընթացներին համահունչ՝ պահպանելով հաստատության ինքնավարությունը:

Բացի այդ, որակի արտաքին ապահովումը հիմնված է հաստատության որակի ներքին ապահովման համակարգի կողմից վեր հանված տեղեկատվության վրա: Մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովումը ՀՀ-ում իրականացվում է պետական հավատարմագրման հետևյալ երկու գործընթացներով.

1. ինստիտուցիոնալ հավատարմագրում,

2. մասնագիտության կրթական ծրագրի հավատարմագրում (Ծրագրային հավատարմագրում):

Ինստիտուցիոնալ հավատարմագրում. պետության կողմից ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ օրենքով սահմանված ուսումնական հաստատության տեսակին ներկայացվող պահանջներին, պետական կրթական չափորոշիչներին և ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է ՀՀ տարածքում գործող մասնագիտական բոլոր ուսումնական հաստատությունների համար՝ անկախ ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը թույլ է տալիս գնահատել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև տեսնել, թե արդյոք հաստատությունն իրականացնում է իր առաքելությունը, հետապնդում է շարունակական բարելավման քաղաքականություն և նպաստում է իրականացվող կրթական ծրագրերի զարգացմանը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար:

Մասնագիտության կրթական ծրագրի (Ծրագրային) հավատարմագրում. ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտության կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին և ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխանության ճանաչումն է: Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև ստուգել, թե արդյոք այն ապահովում է ուսանողների կողմից ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ակնկալվող ամբողջ ծավալով: Ծրագրային հավատարմագրումն իրականացվում է ՄՈՒՀ-ի

նախաձեռնությամբ, կամավորության սկզբունքով՝ բացառությամբ բժշկական մասնագիտությունների կրթական ծրագրերի, որոնք պետք է պարտադիր անցնեն ծրագրային հավատարմագրում:

Հավատարմագրման գործընթացների արդյունքում ուսումնական հաստատությանը կամ մասնագիտության կրթական ծրագրին տրվում է հավատարմագրվածի կարգավիճակ. ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում՝ 2, 4 կամ 6 տարի ժամկետով, իսկ ծրագրային հավատարմագրման դեպքում՝ 1 կամ 5 տարի ժամկետով, կամ հավատարմագրում տալը մերժվում է:

Հավատարմագրման գործընթացը ներառում է 3 փուլ.

ա. Ինքնավերլուծություն՝ հաստատության կամ կրթական ծրագրի ինքնավերլուծության գործընթաց, որի արդյունքում պատրաստվում է զեկույց՝ հիմնված ՀՀ կառավարության կողմից սահմանված չափանիշների վրա:

բ. Փորձաքննություն՝ անկախ փորձագետների խմբի կողմից ինքնավերլուծության և կից ներկայացված հիմնավորող փաստաթղթերի, էլեկտրոնային հարցաշարի ուսումնասիրություն և այց ուսումնական հաստատություն:

Այցի ժամանակ տեղի են ունենում հանդիպումներ վարչական, պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողության ներկայացուցիչների, շրջանավարտների, գործատուների և այլ շահակիցների հետ: Արդյունքում պատրաստվում է փորձագիտական զեկույց, որը ներառում է գնահատական, ինչպես նաև խորհրդատվություններ բարելավման վերաբերյալ:

գ. Որոշման կայացում՝ հավատարմագրման հանձնաժողովի կողմից փաստերի ուսումնասիրություն, որոշման կայացում և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների մատնանշում:

ԳԼՈՒԽ 3.
ԳՊՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1.ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակը

ԳՊՀ կրթության ՈԱ քաղաքականության նպատակն է ապահովել Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացումը՝ առաջնորդվելով բարձրագույն մասնագիտական կրթության ՈԱ ազգային ու միջազգային չափանիշներով ու չափորոշիչներով և որակի կառավարման՝ Դեմինգի՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում /ՊԻԳԲ/ շրջափուլով /տե՛ս գծապատկեր 1/:

ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացման Դեմինգի՝ պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում /ՊԻԳԲ/ շրջափուլը

Գծապատկեր 1.

ՊԼԱՆԱՎՈՒՄ (Plan)

1. ԳՊՀ առաքելությունից բխող բոլոր ոլորտներում իրականացվող գործընթացներից ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանում, ուսումնասիրում և վերլուծություն՝ դրանց հիման վրա առաջարկությունների ձևակերպում, կառուցվածքային ստորաբաժանումների կողմից գործողությունների պլանի ներկայացում:
2. Կրթական, գիտական գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական փաստաթղթերի, ընթացակարգերի և մեթոդական հիմքերի մշակման ու պարբերական արդիականացման գործընթացներում ՈԱ կառավարման շրջափուլի ապահովում:
3. ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրին համահունչ կրթության ՈԱ գործընթացների պլանավորում, գնահատման արդյունավետության ցուցիչների սահմանում:
4. Կրթության ՈԱ գործընթացներում վտանգների կառավարման և հնարավոր մարտահրավերների կանխատեսման մեխանիզմների մշակում:
5. ԳՊՀ առաքելությունից բխող բոլոր ոլորտներում իրականացվող գործընթացներում շահակիցների ներգրավման և հետադարձ կապի ապահովման կառուցակարգերի նախագծում և ներդնում:

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

1. Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում ՈԱ քաղաքականությունից բխող գործընթացների իրականացում:
2. ՄԿԾ-ների իրականացման գործում սահմանված չափանիշներին և ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխանության մշտադիտարկում:
3. ԳՊՀ ՌԾ-ի առաջնահերթություններից բխող մարդկային, նյութատեխնիկական և տեղեկատվական ռեսուրսների ապահովման և արդյունավետ կառավարման գործընթաների մշտադիտարկում:

4. Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի կարողությունների շարունակական զարգացման որակի ապահովում և վերահսկում:
5. ՈԱ գործընթացների թվայնացում, տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության գործիքների կիրառում:
6. Շահակիցների իրազեկվածության բարձրացում, կրթության ՈԱ գործընթացներում մասնակցության ապահովում և ակադեմիական ազնվության սկզբունքների պահպանում:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Մասնագիտական կրթական ծրագրերի և կրթական գործընթացների մշտադիտարկման արդյունքների վերլուծություն և գնահատում:
2. Ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության գնահատում (հարցումներ, նպատակային խմբեր և այլ գործիքներ):
3. Կառուցվածքային ստորաբաժանումների ինքնավերլուծության գործընթացների գնահատում:
4. ՈԱ գործընթացների արդյունավետության ինքնագնահատում՝ սահմանված գնահատման արդյունավետության ցուցիչների հիման վրա:
5. Կրթական, գիտահետազոտական և այլ գործընթացների ՈԱ վերաբերյալ հաշվետվությունների կազմում և ներկայացում Համալսարանի կառավարման մարմիններին՝ տվյալահեն որոշումների կայացման նպատակով:
6. Հենանիշային վերլուծության (բենչմարքինգ) և արտաքին գնահատման արդյունքների ուսումնասիրություն ու վերլուծություն:

ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. Գնահատման արդյունքների հիման վրա բարելավման ծրագրերի մշակում, իրականացում և մշտադիտարկում:
2. ՈԱ համակարգի ուժեղ և թույլ կողմերի վերհանում և զարգացման առաջնահերթ ուղղությունների սահմանում:
3. Վտանգների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում և ՈԱ համակարգի արդյունավետության բարձրացում:
4. Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունների

ծրագրերի մշակում և արդյունավետության ցուցանիշների սահմանում:

5. Որակի մշակույթի շարունակական զարգացում և ինստիտուցիոնալացում:

ԳՊՀ ՌԾ-ի իրականացման գործընթացի նկատմամբ Համալսարանի կառավարման մարմինների, ներքին և արտաքին շահառուների կողմից կիրառվում են շարունակական վերահսկողության, մշտադիտարկման, գնահատման, արդյունքների վերլուծության և բարելավման կառուցակարգեր՝ ՌԾ-ի իրականացման գործընթացի որակի ապահովման պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլին համապատասխան (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2.


Գառնաձորի պետական հատուկ դպրոցի ռազմահայրենասիրական ծրագրի իրականացման մեխանիզմների՝ պլանավորում, իրագործում, վերահսկում, բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլի գծապատկեր
1.Պլանավորում
ԳՊՀ ՀԻԳԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԻԳԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԱՅԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԻԳԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ / ՏԱՐԵԿԱՆ/ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
2.Իրագործում
ԳՊՀ ՌԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻԳԱՄՅԱ, ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ, ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԼԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԻԳԱՄՅԱ ՌԾ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ԱՅԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԻԳԱՄՅԱ ՌԾ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ /ՏԱՐԵԿԱՆ / ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
3.Վերահսկում
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ
ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԻԳԱՄՅԱ ՌԾ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԱՅԼ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԻԳԱՄՅԱ Ռ Ծ-Ի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՄԵՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ / ՏԱՐԵԿԱՆ ՄԵՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆՆԵՐՈՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ
4.Բարելավում
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀՈՍՏԵՏԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՊԻԳԲ ՇՐՋԱՓՈՒԼ

3.2. ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները

1. Ապահովել Համալսարանում կրթության բարձր որակ՝ ամրապնդելով որակի մշակույթը և շարունակական բարելավման գործընթացները:
2. Նախատեսել Համալսարանի ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների գործառույթները՝ խթանելով մասնակցային կառավարումը, հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:
3. Ապահովել բարենպաստ կրթական միջավայր և անհրաժեշտ պայմաններ՝ հիմնված ուսանողակենտրոն ուսուցման, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճի, գիտահետազոտական գործունեության խթանման, ակադեմիական ազնվության, արդյունավետ ուսուցման սկզբունքների վրա:
4. Համապատասխանեցնել ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ-ներ) Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) որակավորման շրջանակին և ՀՀ որակավորումների ազգային ու ոլորտային շրջանակներին, աշխատաշուկայի պահանջներին:
5. Կրթության որակի բարելավման գործընթացներում ներգրավել շահակիցների լայն շրջանակ՝ ուսանողներ, դասախոսներ, շրջանավարտներ, գործատուներ և հասարակական կազմակերպություններ՝ ապահովելով նրանց ակտիվ մասնակցությունը, կարծիքների և առաջարկությունների հավաքագրումն ու հաշվառումը, ինչպես նաև հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների կիրառումը:
6. Ապահովել Համալսարանի գործունեության վերաբերյալ հանրային վստահության բարձր մակարդակ՝ թափանցիկության, հաշվետվողականության պահպանմամբ:
7. Բացահայտել ԳՊՀ ՈԱ ներքին համակարգի ուժեղ և թույլ կողմերը և մշակել բարելավման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր:

3.3. ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացման կառուցակարգերը

ԳՊՀ-ում կրթության ՈԱ քաղաքականության իրականացման համար կիրառվում են հետևյալ կառուցակարգերը.

1. **Ինքնավերլուծություն և ինքնագնահատում՝** ընթացակարգ, որի շրջանակում Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումները, ֆակուլտետները և ամբիոնները կատարում են իրենց երկրաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորված գործողությունների, ՄԿԾ-ների, դասավանդման մեթոդների և ներքին գործընթացների համակարգված ինքնավերլուծություն և ինքնագնահատում՝ նպատակ ունենալով բացահայտել հնարավոր վտանգները, ուժեղ և թույլ կողմերը, մշակել շարունակական բարելավման գործողությունների պլաններ:
2. **Մշտադիտարկում՝** հնարավոր վտանգների կառավարման և շարունակական բարելավման նպատակով իրականացվող գործընթաց, որի ընթացքում վերահսկվում և գնահատվում են ուսումնական գործընթացի, դասախոսական և վարչարարական գործունեության արդյունավետությունը, ՈԱ գործընթացներում ուսանողների մասնակցությունը, ՄԿԾ-ների իրականացման որակը:
3. **Հարցումներ՝** շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում իրականացվում է բավարարվածության գնահատում, որը թույլ է տալիս հավաքագրել շահակիցների կարծիքները, վերհանել կարիքները, գնահատել կրթական ծառայությունների որակը և մշակել առաջարկություններ ուսուցման գործընթացի կատարելագործման համար:
4. **Շահակիցների թիրախային խմբերի հետ պարբերական հանդիպումներ՝** շահառուների հետ կազմակերպվող հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում են տվյալ թիրախային խմբի կարիքներին համապատասխան կրթության ՈԱ-ը վերաբերող խնդիրները և մշակում բարելավման ուղիներ:
5. **Նպատակային խմբերի ձևավորում, կլոր սեղան-քննարկումների**

կազմակերպում՝ համակարգված նախաձեռնություններ, որոնք հնարավորություն են տալիս հավաքել առկա խնդիրների շուրջ շահառուներից ընտրված փորձագետների, դասախոսների և ուսանողների տեսակետները, մշակել առաջարկություններ և խթանել մասնակցային որոշումների կայացումը:

6. **Հենանիշային վերլուծություն (բենչմարքինգ)՝** իրականացվում է ԳՊՀ գործունեության ինչպես բոլոր ոլորտների, այնպես էլ առանձին ոլորտում ԳՊՀ գործունեության, ՄԿԾ-ների առանձին բաղադրիչների կամ ամբողջական համեմատություն, վերլուծություն համանման ազգային ու միջազգային բուհերի լավագույն փորձի հետ՝ նպատակ ունենալով բացահայտել մրցակցային առավելությունները, վերհանել թերությունները և կիրառել առաջատար փորձը Համալսարանի զարգացման և կրթության որակի շարունակական բարելավման նպատակով:
7. **Արտաքին գնահատում՝** Համալսարանի գործունեությունը գնահատող լիազոր մարմնի կամ արտաքին գնահատում իրականացնող սուբյեկտների կողմից իրականացվող գործընթաց, որի արդյունքում հավաստվում է Համալսարանի գործունեության համապատասխանությունը սահմանված պահանջներին, չափանիշներին ու չափորոշիչներին:

3.4. Որակի ներքին ապահովման ընթացակարգ

ԳՊՀ-ում կրթության որակի ներքին ապահովումը հանդիսանում է Համալսարանի գործունեության առանցքային ուղղություններից մեկը և իրականացվում է որպես շարունակական, համակարգված գործընթաց՝ ուղղված Համալսարանի առաքելության, զարգացման ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացմանը:

ԳՊՀ-ում կրթության որակի ներքին ապահովման գործընթացները կանոնակարգված են համապատասխան ներքին իրավական ակտերով, որոնցով սահմանված են գործընթացների իրականացման կառուցակարգերը, պատասխանատու մարմինների լիազորություններն ու գործառույթները, ինչպես նաև

ներքին և արտաքին շահակիցների ներգրավման, իրազեկման և հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:

Համալսարանում շարունակաբար իրականացվում են կրթության ՈԱ համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքներ՝ որակի ներքին ապահովման ընթացակարգերի վերանայման, արդիականացման և բարեփոխման միջոցով՝ ապահովելով որակի մշակույթի զարգացումը և բարելավման շարունակականությունը:

Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների որակի վերահսկման նպատակով մշակվել, ընդունվել, փոփոխվել և լրամշակվել են մի շարք կանոնակարգեր.

1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի զարգացման ռազմավարական ծրագիր (2023-2027թթ.),
2. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հակակոռուպցիոն ծրագիր (2023-2027 թթ.),
3. ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման քաղաքականության հիմունքներ,
4. ԳՊՀ որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգ (փոփոխություններով),
5. ԳՊՀ-ում ուսուցանվող մասնագիտության կրթական ծրագրի մշակման, հաստատման, իրականացման ընթացքի մշտադիտարկման և բարելավման ընթացակարգ,
6. ԳՊՀ-ում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման և ուսումնամեթոդական բազայի բարելավման ընթացակարգ (փոփոխություններով),
7. ԳՊՀ-ում սովորողների ուսումնառության արդյունքների բարելավման քաղաքականության մշակման և իրականացման ընթացակարգ,
8. ԳՊՀ-ում ուսուցման մեթոդների գնահատման և բարելավման ընթացակարգ,

9. ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ (փոփոխություններով),
10. Շահակիցների պահանջների հաշվառմամբ ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման ընթացակարգ (փոփոխություններով),
11. ԳՊՀ-ում առաջավոր փորձի ուսումնասիրման, վերլուծության և համադրման (բենչմարքինգի) ընթացակարգ (փոփոխություններով),
12. Գավառի պետական համալսարանում դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգ,
13. ԳՊՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման ընթացակարգ,
14. Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների մասնագիտական որակների գնահատման և բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացակարգ (փոփոխություններով),
15. Գավառի պետական համալսարանի գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության ապահովման կարգ,
16. այլ ակտեր:

3. 5. ԳՊՀ որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինները և այդ ուղղությամբ նրանց գործառույթները

ԳՊՀ-ում կրթության ՈԱ քաղաքականության մշակման, իրականացման, որակի կառավարման, վերահսկողության և բարելավման, Համալսարանում որակի մշակույթի ձևավորման, որակի քաղաքականության և համադրական վերլուծության իրականացման համար պատասխանատվություն են կրում ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը, գիտական խորհուրդը, ռեկտորը, պրոռեկտորը, ՈԱ բաժինը,

ֆակուլտետները, ՄԿԾ-ների ղեկավարները, ամբիոնների վարիչները, Համալսարանի այլ կառուցվածքային ստորաբաժանումները:

1. **Համալսարանի հոգաբարձուների խորհուրդն** իրականացնում է ՈԱ հետևյալ գործառույթները՝

   ա/ Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը, հանդիսանալով բուհի բարձրագույն կառավարման մարմին, իրականացնում է Համալսարանի զարգացման հեռանկարային ուղղությունների ձևավորումն ու դրանց կատարման վերահսկողությունը:

   բ/ Հոգաբարձուների խորհուրդը քննարկում է Համալսարանի կրթության ՈԱ հիմնախնդիրները, ներկայացնում բարելավման առաջարկություններ և իրականացնում իր իրավասություններից բխող այլ գործառույթներ, որոնք ուղղված են Համալսարանի կառավարման արդյունավետության բարձրացմանը, կրթության որակի շարունակական կատարելագործմանը:

2. **Համալսարանի գիտական խորհուրդը** իրականացնում է ՈԱ հետևյալ գործառույթները՝

   ա/ համակարգում, քննարկում և հաստատում է ԳՊՀ կրթական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական գործունեության ոլորտներում կատարվող ներբուհական աշխատանքները՝ ապահովելով դրանց որակն ու արժանահավատությունը,

   բ/ հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերը, Համալսարանի և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությանը և ուսումնական գործընթացին, այդ թվում՝ ՈԱ ոլորտին առնչվող կանոնակարգող այլ ներքին իրավական ակտերը, քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը՝ ապահովելով դրանց որակն ու որակավորումների արժանահավատ շնորհումը,

   գ/ Համալսարանի տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկում և հաստատում է կրթության որակի ապահովման աշխատանքների արդյունքները, վերլուծությունները՝ հանդես գալով բարելավման առաջարկություններով:

3. **Համալսարանի ռեկտորն** իրականացնում է ՈԱ հետևյալ գործառույթները՝

ա/ ղեկավարում է Համալսարանում կրթության ՈԱ քաղաքականության և համապատասխան ռազմավարության մշակման աշխատանքները, ուղղորդում դրանց իրականացումը,

բ/ ապահովում է անհրաժեշտ ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսները՝ ՈԱ նպատակները կյանքի կոչելու համար:

4. **Համալսարանի պրոռեկտորն** իրականացնում է ՈԱ հետևյալ գործառույթները՝

ա/ պատասխանատու է ՄԿԾ-ների բովանդակային և կազմակերպչական ՈԱ համար,

բ/ համակարգում է նոր ՄԿԾ-ների մշակման, գործող ծրագրերի արդիականացման և որակի գնահատման գործընթացները,

գ/ Ակադեմիական քաղաքականության և Որակի ապահովման բաժինների հետ համատեղ վերլուծում է ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների կողմից ներկայացված կարծիքներն ու առաջարկությունները, ներկայացնում բարելավման առաջարկություններ,

դ/ պատասխանատու է ակադեմիական ազնվության և էթիկայի կանոնների կիրառման և վերահսկման համար,

ե/ ղեկավարում է գիտական հետազոտությունների, գիտական նախագծերի և հրապարակումների որակի ապահովման աշխատանքները,

զ/ համակարգում և վերահսկում է կրթական գործընթացներում թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության գործիքների արդյունավետ և նպատակային կիրառումը՝ ապահովելով ակադեմիական ազնվության սկզբունքների պահպանումը,

է/ պատասխանատու է Համալսարանի ինքնագնահատման և ներքին աուդիտի գործընթացների արդյունքների վերլուծության և բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման համար:

5. **Որակի ապահովման բաժինն** ապահովում է Համալսարանի ՈԱ համակարգի գործունեության անընդհատությունը և արդյունավետությունը՝ իրականացնելով հետևյալ գործառույթները՝

ա/ պատասխանատու է կրթության ՈԱ ոլորտում կատարվող բոլոր ներբուհական գործընթացների համակարգման և ուղղորդման, այդ թվում՝ ՈԱ քաղաքականության և դրանից բխող փաստաթղթային հիմքի մշակման ու կիրառման համար,

բ/ ԳՊՀ կառավարման մարմինների հետ քննարկում է ՈԱ խնդիրները, ներկայացնում բարելավման ուղիներ, աջակցում է Համալսարանի զարգացման ռազմավարության մշակման գործընթացներին,

գ/ պատասխանատու է Համալսարանի ինստիտուցիոնալ և ծրագրային գնահատման, հավատարմագրման գործընթացների համակարգման և վերահսկման համար,

դ/ կազմակերպում և վերահսկում է ներքին և արտաքին շահակիցների (ուսանողներ, շրջանավարտներ, գործատուներ, դասախոսներ) կարիքների վերհանման և գնահատման գործընթացները՝ կիրառելով հարցումներ, նպատակային խմբեր, քննարկումներ, մտագրոհներ և այլ գործիքակազմեր,

ե/ ապահովում է մեթոդական աջակցություն ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներին՝ ՈԱ գործառույթների և ընթացակարգերի իրականացման ու մշտադիտարկման ուղղությամբ,

զ/ պատասխանատու է բոլոր շահակիցների համար կրթության ՈԱ վերաբերյալ ճշգրիտ և հրապարակային տեղեկատվության հասանելիության համար,

է/ նպաստում է որակի ապահովման գործընթացներում շահակիցների իրազեկության բարձրացմանը և նրանց ակտիվ ներգրավմանը,

ը/ իրականացնում է Համալսարանում կիրառվող թվային և արհեստական բանականության գործիքների արդյունավետության մշտադիտարկում, գնահատում է դրանց ազդեցությունը կրթության որակի վրա և վերահսկում ակադեմիական ազնվության սկզբունքների պահպանումը թվային տիրույթում:

թ/ պատասխանատու է ԳՊՀ գործունեության բոլոր ոլորտներում որակի կառավարման պլանավորման, իրականացման, գնահատման և ստուգման, ինչպես նաև բարելավման գործընթացների իրականացման համար՝ կիրառելով Դեմինգի շրջափուլը,

ժ/ ներգրավվում է ՄԿԾ-ների վերանայման, գնահատման և բարելավման, ինչպես նաև կրթության որակի բարելավմանն ուղղված այլ գործընթացներում:

6. **Ֆակուլտետն** իրականացնում է ՈԱ հետևյալ գործառույթները՝

ա/ որակի ներքին ապահովման ընթացակարգերին համապատասխան պատասխանատու է ֆակուլտետում կրթության ՈԱ և վերահսկման բոլոր գործառույթների կազմակերպման և իրականացման համար,

բ/ ֆակուլտետի շրջանակում ապահովում է Համալսարանում կրթության ՈԱ քաղաքականության իրականացումը,

գ/ կազմակերպում է ֆակուլտետի գործունեության ինքնավերլուծությունը՝ Համալսարանի ինքնագնահատման գործընթացի շրջանակներում շահակիցների հասանելի միջոցներով հրապարակում ինքնավերլուծության զեկույցը:

7. **ՄԿԾ-ի ղեկավարն** իրականացնում է ՈԱ հետևյալ գործառույթները՝

ա/ կազմակերպում է ՄԿԾ-ի մշակման, իրականացման, մշտադիտարկման, պարբերական վերանայման գործընթացները,

բ/ պլանավորում է ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, մշակում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակներին ներկայացվող պահանջները, ուսումնաօժանդակ, ակադեմիական խորհրդատվական ծառայությունները՝ նախապես սահմանված նպատակներին, վերջնարդյունքներին համապատասխան,

գ/ ապահովում է ՄԿԾ-ների իրականացման, արդյունքների և մշտադիտարկման վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը:

8. **ԳՊՀ կառուցվածքային այլ ստորաբաժանումները** պատասխանատու են իրենց ստորաբաժանման մակարդակով տվյալ ոլորտում ՈԱ գործընթացների իրականացման, վերահսկման և շարունակական բարելավման համար՝ այդպիսով նպաստելով Համալսարանում կրթության ՈԱ քաղաքականության իրականացմանը:

9. **Ուսանողական խորհուրդը և գիտական ընկերությունը** (այսուհետև՝ ՈՒԽ, ՈՒԳԸ) Համալսարանում գործող ինքնակառավարվող ուսանողական կառույցներ են, որտեղ ներգրավված ուսանողներն անմիջական մասնակցություն են ունենում Համալսարանի ՈԱ գործընթացներում՝ ներկայացնելով ուսանողության կրթական կարիքները և առաջարկները:

10. **Ուսանողներն** իրականացնում են ՈԱ հետևյալ գործառույթները՝

ա/ ընդգրկվում են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով դասավանդման, ուսումնառության և գնահատման արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումներին,

բ/ ընդգրկվում են Համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, ֆակուլտետային խորհուրդների կազմերում, լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում որոշումների կայացմանը,

գ/ մասնակցում են Համալսարանի ֆակուլտետների ինքնագնահատման, ինքնավերլուծության գործընթացներին,

դ/ ընդգրկվում են Համալսարանում ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի կազմում,

ե/ անդամակցում են ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման հանձնաժողովին, այդ թվում՝ ամփոփիչ ատեստավորման գործընթացում:

11. **Շրջանավարտները, գործատուները՝** որպես ԳՊՀ-ի արտաքին շահակիցներ, տարբեր ձևաչափերով պարբերաբար ներգրավվում են Համալսարանի գործունեության որակի բարելավման միջոցառումներում՝ մասնակցելով ԳՊՀ ռազմավարության մշակման, իրականացման ու բարելավման, հավատարմագրման, շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության գնահատման, ՄԿԾ-ների վերանայման և կատարելագործման աշխատանքներին, Համալսարանում կազմակերպած կլոր սեղան-քննարկումներին և ԳՊՀ-աշխատաշուկա կապի ամրապնդմանը միտված այլ միջոցառումներին:

12. **Արտաքին գնահատողները (փորձագետները)** իրականացնում են ԳՊՀ գործունեության, ՈԱ համակարգի և ՄԿԾ-ների արտաքին փորձաքննություն՝ ՄԿԾ-ների աուդիտի, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների շրջանակներում (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3

3.6. Մասնագիտական կրթական ծրագրերի մշակում, հաստատում, շարունակական մշտադիտարկում և բարելավում

ԳՊՀ-ում ՄԿԾ-ների մշակման, հաստատման, իրականացման, մշտադիտարկման և բարելավման գործընթացը բխում է Համալսարանի առաքելությունից և տեսլականից ու իրականացվում է ՈԱԵՉՈՒ-ին համապատասխան: Գործընթացը կազմակերպվում է որակի կառավարման՝ պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում շրջափուլի հիման վրա՝ ապահովելով շարունակական, շրջափուլային զարգացում, որտեղ յուրաքանչյուր փուլ հիմնվում է նախորդի արդյունքների վրա (տե՛ս գծապատկեր 4):

Գծապատկեր 4.

ՄԿԾ-ների մշակում

ՄԿԾ-ները մշակվում են Համալսարանի ռազմավարական նպատակներին համահունչ՝ հիմք ընդունելով կրթական չափորոշիչները, որակավորումների ազգային և ոլորտային շրջանակները, աշխատաշուկայի պահանջները և մասնագիտական ոլորտի, գիտակրթական արդի զարգացումները: Միաժամանակ հաշվի են առնվում տարածաշրջանային կրթական կարիքները և Համալսարանի հանրային պատասխանատվությունը:

ՄԿԾ-ների մշակման կարևոր բաղադրիչ է ուսումնառության ակնկալվող արդյունքների հստակ ձևակերպումը, որոնք սահմանվում են՝ կիրառելով Բլումի տաքսոնոմիայի մոտեցումները: Ուսումնառության արդյունքները ձևակերպվում են ըստ ճանաչողական մակարդակների՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, համադրում և գնահատում՝ կիրառելով համապատասխան գործողությունների բայացանկ, ինչը ապահովում է դրանց չափելիությունն ու գնահատելիությունը (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5.

Կրթական նպատակների տաքսոնոմիա

Բլումի տաքսոնոմիայի կիրառումը հնարավորություն է տալիս ապահովել ուսումնառության արդյունքների հստակ և աստիճանակարգված ձևակերպում, ինչպես նաև կառուցվածքային համադրություն[6] ուսումնառության արդյունքների, դասընթացների բովանդակության, ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդների միջև՝ նպաստելով սովորողների վերլուծական, քննադատական և ստեղծարար կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Ուսումնառության արդյունքները հանդիսանում են ՄԿԾ կառուցվածքի հիմքը և առանցքային բաղադրիչը, որոնց շուրջ կառուցվում են ՄԿԾ-ի մյուս տարրերը: Դրանց հիման վրա ձևավորվում է կրթական ծրագրի ամբողջական կառուցվածքը, որը ներառում է՝

1. ուսումնական պլան՝ կրեդիտների բաշխմամբ,
2. դասընթացների նկարագրություններ,
3. ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդներ,
4. պրակտիկաներ և ամփոփիչ ատեստավորում:

[6] chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.tru.ca/__shared/assets/Constructive_Alignment36087.pdf

ՄԿԾ-ների մշակման գործընթացում ապահովվում է շահակիցների՝ դասախոսների, ուսանողների, շրջանավարտների, գործատուների և ոլորտային փորձագետների ներգրավվածությունը, ինչը նպաստում է ՄԿԾ-ների համապատասխանությանը շահակիցների և աշխատաշուկայի պահանջներին:

ՄԿԾ-ների իրականացում

ՄԿԾ-ների իրականացումը կազմակերպվում է ամբիոնների, դեկանատների և Ակադեմիական քաղաքականության բաժնի համակարգմամբ և ուսումնագիտական գծով պրոռեկտորի վերահսկողությամբ: Ուսումնական գործընթացն իրականացվում է հաստատված ուսումնական պլանների և ժամանակացույցների հիման վրա՝ ապահովելով ուսումնառության արդյունքների ձեռքբերումը:

Ուսուցման, ուսումնառության և գնահատման մեթոդները ընտրվում են այնպես, որ ապահովեն ուսումնառության արդյունքների ձեռքբերումը:

ՄԿԾ-ների մշտադիտարկում

ԳՊՀ-ում ՄԿԾ-ների որակի ապահովման նպատակով իրականացվում է շարունակական մշտադիտարկում՝ կիսամյակային և տարեկան պարբերականությամբ: Մշտադիտարկման ընթացքում գնահատվում է ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակը և ծրագրի արդյունավետությունը:

Մշտադիտարկման համար հիմք են հանդիսանում.

1. ՄԿԾ-ի իրականացման որակի վերաբերյալ ուսանողական և դասախոսական կազմի կարծիքները,
2. ՄԿԾ-ի փաստական ելքային արդյունքների համադրումը նախատեսված ակադեմիական չափանիշների հետ,
3. ՄԿԾ-ի արդիականության և աշխատաշուկայում պահանջարկի վերագնահատումը,
4. ՄԿԾ-ի իրականացման որակի գնահատումը ՄԿԾ-ի շրջանավարտների և գործատուների կողմից,
5. ՄԿԾ-ի վերաբերյալ արտաքին փորձաքննության եզրակացությունը,
6. ՄԿԾ-ի ռեսուրսային ապահովվածության վերագնահատումը և այլն:

Այս գործընթացներին համընթաց իրականացվում է ՄԿԾ-ների ներքին փորձաքննություն՝ արտաքին փորձագետների ներգրավմամբ, որի ընթացքում գնահատվում է ՄԿԾ-ների համապատասխանությունն ուսումնառության արդյունքներին, ՄԿԾ-ի նպատակներին, ինչպես նաև որակի ապահովման ազգային և եվրոպական չափանիշներին:

ՄԿԾ-ների վերանայում և բարելավում

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության որակի վերահսկման և իրականացվող գործընթացների արդյունավետության ապահովման կարևոր ուղենիշ է ՄԿԾ-ների որակի վերաբերյալ բնութագրիչ տվյալների բազայի ստեղծումը, գնահատումը և շարունակական բարելավումը, Համալսարանում ձևավորվել է տվյալահեն որակի ապահովման համակարգ:

Այս համակարգի շրջանակում ՄԿԾ-ների վերանայման և բարելավման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ՄԿԾ-ների որակի վերաբերյալ հաշվետվությունները և բազմակողմանի տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը: Մասնավորապես՝ վերանայման համար հիմք են հանդիսանում՝

1. շահակիցների՝ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների կարծիքներն ու առաջարկությունները,
2. աշխատաշուկայի զարգացումները և մասնագիտական ոլորտի փոփոխվող պահանջները,
3. համապատասխան ոլորտի գիտահետազոտական նոր արդյունքներն ու զարգացումները,
4. արտերկրի և ՀՀ առաջատար բուհերում իրականացվող համանման ծրագրերի ուսումնասիրությունը (բենչմարքինգ) և համադրական վերլուծությունները,
5. ուսումնառության արդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատման արդյունքները,
6. Ակադեմիական քաղաքականության և որակի ապահովման բաժնի կողմից իրականացված դասալսումների արդյունքների վերլուծությունները,
7. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացություններն ու առաջարկությունները,

8. արտաքին փորձագիտական գնահատումների, եզրակացությունների և մասնագիտական խորհրդատվությունների արդյունքները:

Հավաքագրված տվյալների հիման վրա իրականացվում է ՄԿԾ-ների համակողմանի վերլուծություն: Վերլուծությունների արդյունքում մշակվում են բարելավման գործողությունների պլաններ՝ համապատասխան կատարողական ժամկետների, պատասխանատուների, անհրաժեշտ ռեսուրսների և գնահատման արդյունավետության ցուցիչների սահմանմամբ:

Գործընթացը կրում է շարունակական բնույթ և ապահովում է ինչպես ՄԿԾ-ների արդիականացումը, այնպես էլ Համալսարանի ռազմավարական զարգացման նոր ուղղությունների ձևավորումը:

3.7. Ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդում և գնահատում

Ուսանողակենտրոն ուսուցումը, դասավանդումը և գնահատումը ԳՊՀ-ում իրականացվում են Համալսարանի ռազմավարական նպատակներին, գործող ներքին իրավական ակտերին և ՈԱԵՉՈ-ին համապատասխան: Դրանք կազմակերպվում են որակի կառավարման շարունակական բարելավման ՊԻԳԲ շրջափուլի հիման վրա՝ ապահովելով գործընթացների պլանավորումը, թափանցիկությունը, վերահսկողությունը և շարունակական բարելավումը:

3.7.1. Ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպում

ԳՊՀ-ում ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպումը ներառում է հետևյալ հիմնական դրույթները՝

1. ուսանողների անհատական կրթական կարիքների հաշվառում՝ ճկուն ուսումնառության ուղիների ապահովմամբ,
2. ուսումնառության արդյունքահեն մոտեցման կիրառում կրթական ծրագրերի նախագծման և իրականացման ընթացքում,
3. դասավանդման բազմազան մեթոդների և ձևերի կիրառություն՝ ուսանողների ակտիվ մասնակցության ապահովմամբ,

4. ուսանողների ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու, քննադատական, ստեղծարար մտածողության և հետազոտական կարողությունների խթանում,
5. ուսանող-դասախոս համագործակցության և ակադեմիական ազնվության վրա հիմնված կրթական միջավայրի ապահովում,
6. ուսուցման գործընթացի պարբերական մշտադիտարկում և բարելավում՝ հիմնված հետադարձ կապի և փաստահեն տվյալների վրա:

3.7.2. Դասավանդման կազմակերպում

Դասավանդման գործընթացը ԳՊՀ-ում իրականացվում է՝

1. դասընթացների առարկայական ծրագրերով սահմանված ուսումնառության արդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների փոխկապակցվածության ապահովմամբ,
2. ժամանակակից մանկավարժական, թվային և փոխներգործուն մեթոդների կիրառմամբ,
3. ներառական և հասանելի կրթական միջավայրի ապահովմամբ,
4. ուսանողների առաջադիմության, հետադարձ կապի և ներքին մշտադիտարկման արդյունքների հիման վրա դասավանդման արդյունավետության պարբերական գնահատմամբ,
5. դասախոսական կազմի մասնագիտական շարունակական զարգացման ապահովմամբ:

3.7.3. Գնահատման կազմակերպում

Ուսանողների գնահատման գործընթացը ԳՊՀ-ում իրականացվում է գործող ներքին իրավական ակտերի հիման վրա և միտված է ուսումնառության արդյունքների ձեռքբերման աստիճանի օբյեկտիվ և համակողմանի գնահատմանը:

Համալսարանում կիրառվում է բազմագործոն գնահատման համակարգ, որը ներառում է ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ գնահատումներ, ինչպես նաև ինքնուրույն և հետազոտական աշխատանքների գնահատում:

Գնահատման գործընթացն իրականացվում է հետևյալ սկզբունքների պահպանմամբ՝

1. գնահատման չափանիշների, մեթոդների և ընթացակարգերի սահմանում և հրապարակում,
2. գնահատման թափանցիկության և օբյեկտիվության ապահովում,
3. ուսումնառության արդյունքների համապատասխանության գնահատում սահմանված նպատակներին,
4. գնահատման մեթոդների բազմազանության ապահովում,
5. բողոքարկման ընթացակարգերի կիրառում:

3.7.4. ՊԻԳԲ շրջափուլի կիրառում

ԳՊՀ-ում ուսանողակենտրոն ուսուցման, դասավանդման և գնահատման գործընթացների մշտադիտարկումն իրականացվում են որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի շրջանակում՝ ապահովելով գործընթացների համակարգված պլանավորում, իրականացում, արդյունքների գնահատում և տվյալահեն որոշումների հիման վրա բարելավում:

ՊԻԳԲ շրջափուլի կիրառումն իրականացվում է հետևյալ հաջորդականությամբ՝

1. **Պլանավորում՝** սահմանվում են ուսումնառության արդյունքները, դասավանդման և գնահատման մեթոդները, չափանիշները և ընթացակարգերը՝ հիմք ընդունելով ԳՊՀ ՌԾ և անահատական կրթական ծրագրերի նպատակները, շահակիցների պահանջները և եվրոպական և ազգային չափորոշիչները:
2. **Իրականացում՝** իրականացվում են ուսուցման, դասավանդման և գնահատման գործընթացները՝ հաստատված ծրագրերին և մեթոդական մոտեցումներին համապատասխան:
3. **Գնահատում՝** իրականացվում է գործընթացների և ուսումնառության արդյունքների մշտադիտարկում և վերլուծություն՝ օգտագործելով որակի ապահովման գործիքակազմ (հետադարձ կապ, առաջադիմության տվյալներ, դասալսումներ և այլ տվյալահեն աղբյուրներ):
4. **Բարելավում՝** մշտադիտարկման և վերլուծության արդյունքների հիման վրա մշակվում և իրականացվում են բարելավման միջոցառումներ՝ ուղղված ուսուցման, դասավանդման և գնահատման արդյունավետության բարձրացմանը:

ՊԻԳԲ շրջափուլի համակարգված կիրառումն ապահովում է տվյալների վրա հիմնված որոշումների ընդունում, գործընթացների թափանցիկություն և կրթության որակի շարունակական բարելավում:

ԳՊՀ-ում ուսանողակենտրոն ուսուցման, դասավանդման և գնահատման գործընթացները փոխկապակցված են ուսանողի ակադեմիական ճանապարհի բոլոր փուլերի հետ՝ ապահովելով ընդունելության, առաջընթացի, ուսումնառության արդյունքների ճանաչման և ավարտական վկայագրման համակարգված իրականացում:

3.8. ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակի ապահովում

ԳՊՀ-ում պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի ՈԱ-ը հանդիսանում է կրթության որակի ներքին ապահովման առանցքային ուղղություններից մեկը և ուղղակիորեն բխում է Համալսարանի առաքելությունից, տեսլականից և ռազմավարական նպատակներից: Այն կազմակերպվում է ՈԱԵՉՈ-ի հիման վրա՝ ապահովելով պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական կարողունակությունը, շարունակական զարգացումը և գործունեության արդյունավետությունը:

Համալսարանը կրում է առաջնային պատասխանատվություն անձնակազմի արդյունավետ գործունեության համար և ձևավորում է այնպիսի ինստիտուցիոնալ միջավայր, որը խթանում է դասավանդման, ուսումնառության և գիտահետազոտական գործունեության փոխկապակցված զարգացումը:

3.8.1. Անձնակազմի հավաքագրում և ընդունում

Համալսարանում դասախոսական կազմի համալրումն իրականացվում է հստակ սահմանված, թափանցիկ և բազմաստիճան ընթացակարգերով՝ ապահովելով մրցակցային ընտրություն:

Դասախոսների աշխատանքի ընդունման գործընթացն իրականացվում է համաձայն գործող կարգի:

Դասախոսական կազմին ներկայացվող պահանջները սահմանվում են ըստ դասախոսի աշխատանքի նկարագրի՝ ապահովելով մասնագիտական որակավորման համապատասխան մակարդակ (գիտական աստիճան, կոչում, աշխատանքային փորձ և այլն):

Այս գործընթացը ապահովում է՝

1. ընտրության թափանցիկությունը,
2. մասնագիտական համապատասխանությունը,
3. ակադեմիական չափանիշների պահպանումը:

3.8.2. Անձնակազմի գործունեության կազմակերպում և աշխատանքային պայմաններ

ԳՊՀ-ի ՌԾ-ի առաջնահերթություններից ելնելով կարևորվում է աջակցող ակադեմիական միջավայրի ստեղծումը, որը հնարավորություն է տալիս դասախոսներին արդյունավետ իրականացնել իրենց մասնագիտական գործունեությունը:

Այդ միջավայրը՝

1. ապահովում է հստակ սահմանված աշխատանքային պարտականություններ,
2. նպաստում է դասավանդման և գիտահետազոտական գործունեության ինտեգրումը,
3. խրախուսում է ակադեմիական ազնվությունը և էթիկական նորմերի պահպանումը,
4. ապահովում է ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների կիրառման պայմաններ:

3.8.3. Մասնագիտական զարգացում և կարողությունների բարելավում

Համալսարանը կարևորում է դասախոսների շարունակական մասնագիտական զարգացումը և ստեղծում է դրա համար անհրաժեշտ պայմաններ:

Մասնագիտական զարգացման համակարգը ներառում է՝

1. մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, սեմինարներ, կլոր սեղաններ,
2. դասավանդման մեթոդների կատարելագործման դասընթացներ,

3. նորարարական և թվային տեխնոլոգիաների կիրառման ուսուցում,
4. երիտասարդ դասախոսների մենթորության համակարգի իրականացում,
5. միջազգային համագործակցության և փորձի փոխանակման հնարավորություններ:

Այս գործընթացները նպաստում են ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքների ներդրմանը և ուսումնառության արդյունքներին միտված դասավանդմանը:

Համալսարանը խրախուսում է դասախոսական կազմի գիտահետազոտական գործունեությունը՝ դիտարկելով այն որպես կրթության որակի կարևոր բաղադրիչ: Այդ նպատակով՝

1. խրախուսվում է գիտական հրապարակումների ակտիվությունը, գիտական հետազոտությունների իրականացումը,
2. ապահովվում է կրթության և հետազոտության ինտեգրումը,
3. ստեղծվում են պայմաններ գիտահետազոտական նախագծերի իրականացման համար:

3.8.4. Դասախոսի գործունեության գնահատում և մշտադիտարկում

Դասախոսական կազմի գործունեության որակի ապահովման նպատակով Համալսարանում իրականացվում է համակարգված և պարբերական գնահատում: Գնահատման հիմնական գործիքներն են՝

1. ուսանողների կողմից դասախոսների գնահատման հարցումներ,
2. դասալսումներ և փորձագիտական գնահատումներ,
3. ինքնագնահատման մեխանիզմներ,
4. ակադեմիական գործունեության արդյունքների վերլուծություն (դասավանդում, հետազոտություն, հանրային գործունեություն):

Գնահատման արդյունքները օգտագործվում են.

1. դասավանդման որակի բարելավման,
2. մասնագիտական զարգացման կարիքների բացահայտման,
3. խրախուսման և շահադրդման մեխանիզմների ձևավորման համար:

3.8.5.Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի գործունեության բարելավում

Պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակի ապահովման գործընթացը կրում է շարունակական բնույթ և իրականացվում է ՊԻԳԲ շրջափուլի ապահովմամբ:

Գործընթացը ներառում է՝

1. տվյալների հավաքագրում (հարցումներ, մշտադիտարկումներ, հաշվետվություններ),
2. վերլուծություն և արդյունքների գնահատում, խրախուսում,
3. բարելավման գործողությունների պլանավորում,
4. իրականացում և կրկնակի գնահատում:

Այս մոտեցումը ապահովում է անձնակազմի կարողությունների շարունակական զարգացում և կրթության որակի կայուն բարելավում:

ԳՊՀ-ում պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի որակի ապահովումը հանդիսանում է համակարգված, թափանցիկ և տվյալահեն գործընթաց, որը լիովին համապատասխանում է եվրոպական չափորոշիչներին:

Այն ապահովում է՝

1. դասախոսական կազմի մասնագիտական կարողունակությունը,
2. ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորումը,
3. կրթության և հետազոտության արդյունավետ համադրությունը,
4. Համալսարանի կրթական գործունեության շարունակական զարգացումը:

3.9. ԳՊՀ ուսումնական ռեսուրսներ և ուսանողների աջակցություն

ԳՊՀ-ում ՄԿԾ-ների իրականացման համար ուսումնական ռեսուրսների ապահովման և ուսանողների աջակցության գործընթացների ՈԱ-ը հանդիսանում են կրթության որակի ներքին ապահովման համակարգի առանցքային բաղադրիչներ և ուղղակիորեն բխում են Համալսարանի ռազմավարական ծրագրից, ՈԱԵՉՈ-ից:

Համալսարանը երաշխավորում է, որ ուսուցման և ուսումնառության գործընթացների արդյունավետ իրականացման համար առկա են բավարար, մատչելի և արդիական ուսումնական ռեսուրսներ, ինչպես նաև ուսանողակենտրոն աջակցող ծառայություններ՝ ապահովելով բոլոր ուսանողների հավասար հասանելիությունը կրթական միջավայրին:

3.9.1. Ուսումնական ռեսուրսների պլանավորում և ապահովում

ԳՊՀ ուսումնական և ֆինանսական ռեսուրսների նպատակային և արդյունավետ բաշխման համար ռեսուրսների պլանավորումն իրականացվում է հաշվի առնելով Համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունները, ՄԿԾ-ների իրականացման ռեսուրսային պահանջները և «ԳՊՀ ֆինանսական ռեսուրսների կառավարման հիմունքներ» ընթացագարկի դրույթները:

Ռեսուրսների ապահովման համակարգը ներառում է՝

1. ուսումնական, ֆինանսական ռեսուրսների պլանավորում և վերահսկում,
2. ուսումնական նյութատեխնիկական բազայի զարգացում,
3. ուսումնական տարածքների և լաբորատորիաների ապահովում,
4. գրադարանային և թվային տեղեկատվական ռեսուրսների զարգացում:

Համալսարանը ռեսուրսների կառավարման գործընթացում առաջնորդվում է արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներով՝ ապահովելով ֆինանսական և նյութական միջոցների նպատակային օգտագործում՝ ըստ հաստատված գործողությունների երկարաժամկետ, միջնաժամկետ, տարեկան ծրագրերի:

Համալսարանը ապահովում է, որ ուսումնական ռեսուրսները լինեն՝

1. հասանելի բոլոր ուսանողների համար,
2. արդիական և համապատասխան ուսումնառության արդյունքներին,
3. աջակցող ուսանողակենտրոն և փոխներգործուն ուսումնառության ձևերին:

Ռեսուրսների կազմակերպման ընթացքում հաշվի են առնվում ուսանողական համակազմի կրթական կարիքները՝ ներառյալ աշխատող ուսանողներ, հեռակա բաժնի սովորողներ և հատուկ կրթական կարիքներ ունեցող անձինք:

3.9.2.Ուսանողների աջակցության համակարգ

Համալսարանում գործում է բազմաշերտ ուսանողների աջակցության համակարգ, որի նպատակն է նպաստել ուսանողների հաջող ուսումնառությանը, ակադեմիական առաջընթացին և սոցիալական ինտեգրմանը:

Աջակցող ծառայությունները ներառում են՝

1. ակադեմիական խորհրդատվություն և մենթորություն,
2. կարիերայի ուղղորդման ծառայություններ,
3. հոգեբանական և սոցիալական աջակցություն,
4. ուսանողների շարժունակության աջակցություն (ազգային և միջազգային մակարդակներում),
5. տեղեկատվական և վարչական ծառայություններ:

Ուսանողների աջակցության գործընթացում կարևոր դեր ունեն ինչպես դասախոսական, այնպես էլ վարչական և ուսումնաօժանդակ կազմը, որոնք գործում են որպես ուսանողակենտրոն միջավայրի ապահովման հիմնական կրողներ:

Ուսանողների աջակցության ծառայությունների արդյունավետության ապահովման նպատակով Համալսարանը կարևորում է համապատասխան որակավորում ունեցող վարչական և ուսումնաօժանդակ կազմի առկայությունը: Այս առումով Համալսարանն ապահովում է՝ անձնակազմի շարունակական մասնագիտական զարգացում, վերապատրաստումներ և կարողությունների կատարելագործում, ԳՊՀ ծառայությունների որակի պարբերական գնահատում:

Ուսումնական ռեսուրսների և ուսանողների աջակցության համակարգի որակի ապահովումն իրականացվում է շարունակական մշտադիտարկման միջոցով՝ ՊԻԳԲ շրջափուլի ապահովմամբ:

Մշտադիտարկման ընթացքում գնահատվում են՝

1. շահակիցների բավարարվածությունն ուսումնական ռեսուրսներից, մատուցվող ծառայություններից,
2. աջակցության, խորհրդատվական ծառայությունների արդյունավետությունը,
3. ուսումնական ռեսուրսների հասանելիության և հավասարության մակարդակը:

Վերլուծության արդյունքների հիման վրա մշակվում են բարելավման գործողությունների ծրագրեր, որոնք ուղղված են ռեսուրսների արդիականացմանը, ծառայությունների ընդլայնմանը և ուսանողակենտրոն միջավայրի զարգացմանը:

ԳՊՀ-ում ուսումնական ռեսուրսների և ուսանողների աջակցության համակարգը ձևավորում է կրթական գործընթացի արդյունավետ իրականացման նյութական, տեխնոլոգիական և մարդկային հիմքը:

Այն ապահովում է՝

1. կրթական ռեսուրսների հասանելիություն և արդյունավետ օգտագործում,
2. ուսանողների համակողմանի աջակցություն,
3. ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորում և զարգացում,
4. կրթության որակի շարունակական բարելավում՝ ՈԱԵՉՈ-ին համապատասխան:

3.10. ԳՊՀ տեղեկատվական համակարգեր

ԳՊՀ-ում տեղեկատվական համակարգերը հանդիսանում են կրթության որակի ներքին ապահովման համակարգի կարևոր բաղադրիչներից մեկը և ուղղված են կրթական գործընթացների պլանավորման, իրականացման, մշտադիտարկման և բարելավման համար անհրաժեշտ հավաստի, ամբողջական և ժամանակին տեղեկատվության ապահովմանը:

Տեղեկատվական համակարգերի միջոցով կրթության ՈԱ-ն իրականացվում է ՈԱԵՉՈ-ի պահանջներին համապատասխան՝ ապահովելով տվյալների հավաքագրման, պահպանման, վերլուծության և կիրառման համակարգված գործընթացներ:

Համալսարանում տեղեկատվության կառավարումը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

1. հուսալիություն և ճշգրտություն,
2. ամբողջականություն և համակարգվածություն,
3. հասանելիություն և թափանցիկություն,

4. տվյալների պաշտպանություն և գաղտնիություն,
5. տվյալահեն որոշումների կայացում:

Այս սկզբունքներն ապահովում են, որ հավաքագրվող և կիրառվող տեղեկատվությունը ծառայի կրթության որակի շարունակական բարելավմանը:

3.10.1. Տվյալների հավաքագրման և կառավարման համակարգ

Համալսարանում ձևավորվել է տեղեկատվության հավաքագրման և կառավարման միասնական համակարգ, որը ներառում է կրթական գործունեության բոլոր հիմնական ուղղությունները:

Հավաքագրվող տվյալները վերաբերում են՝

1. ուսանողների ընդունելությանը, ընթացիկ առաջադիմությանը և ամփոփիչ ատեստավորման ցուցանիշներին,
2. ուսումնառության արդյունքների ձեռքբերմանը,
3. դասախոսական կազմի գործունեությանը,
4. կրթական ծրագրերի արդյունավետությանը,
5. ուսանողների, շրջանավարտների և գործատուների բավարարվածությանը,
6. ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործմանը,
7. միջազգային համագործակցությանը:

Տվյալների հավաքագրումն իրականացվում է տարբեր գործիքակազմի կիրառմամբ: Մասնավորապես՝

1. հարցումներ՝ շահակիցների կարիքների վերհանում, նրանց բավարարվածության գնահատում, որակական և քանակական տվյալների հավաքագրում, վերլուծում, գնահատում,
2. կլոր-սեղան, նպատակային /ֆոկուս/-խմբերի հետ քննարկումներ՝ ուսանողական կազմի, գործատուների կողմից բարձրացրած խնդիրների շուրջ քննարկումների ծավալում, տվյալների հավաքագրում, բարելավման ուղիների նախանշում,
3. դասալսումներ՝ ԱՔՎ և ՈԱԲ-ի կողմից, համապատասխան ոլորտի մասնագետ դասախոսների ներգրավվմամբ, պլանավորված և փորձնական դասալսումներ,
4. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների եզրակացություններ, նախագահների հաշվետվություններ,

5. բենչմարքինգ՝ արտասահմանյան և ՀՀ առաջատար բուհերում իրականացվող համանման ՄԿԾ-ների, ԳՊՀ գործունեության այլ ոլորտների համադրական վերլուծություն,
6. հաշվետվություններ, ինքնագնահատումներ՝ Համալսարանում իրականացված ծրագրերի, գործունեության բոլոր ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ հանրությանն օբյեկտիվ տեղեկատվության տրամադրում,
7. արտաքին փորձագիտական գնահատումների, եզրակացությունների և մասնագիտական խորհրդատվությունների արդյունքներ,
8. տեղեկատվական էլեկտրոնային համակարգեր՝
   - ✓ ուսումնական գործընթացի կառավարման էլեկտրոնային համակարգեր՝ Էլեկտրոնային դեկանատ, ժամանակացույցների, դասացուցակների և փաստաթղթերի հետ տարվող աշխատանքների համար նախատեսված համակարգ՝ laborant.gsu.am,
   - ✓ ուսանողների հաշվառում, առաջադիմության գրանցում, գնահատումների մուտքագրում՝ Էլեկտրոնային դեկանատ՝ https://usm.gsu.am/,
   - ✓ հաշվապահական և ֆինանսական տվյալների հավաքագրման և կառավարման «**1S**» տեղային համակարգ,
   - ✓ էլեկտրոնային գրադարան՝ «library.gsu.am»,
   - ✓ առցանց ուսուցման և կրթական հարթակներ՝ «learn.gsu.am»,
   - ✓ տեղեկատվական ռեսուրսներ՝ Համալսարանի պաշտոնական կայքէջ և ներքին տեղեկատվական հարթակներ, որոնք ապահովում են տեղեկատվության տարածումը և շահակիցների իրազեկումը՝ gsu.am:

3.10.2. Տեղեկատվության վերլուծություն և կիրառություն

Հավաքագրված տվյալները ենթարկվում են համակարգված վերլուծության՝ կրթական, գիտական, ֆինանսական և այլ գործընթացների արդյունավետության գնահատման և բարելավման նպատակով:

Տվյալների վերլուծության արդյունքները կիրառվում են՝

1. մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման և բարելավման,

2. ուսուցման և գնահատման մեթոդների կատարելագործման,
3. ռեսուրսների պլանավորման և բաշխման,
4. ռազմավարական որոշումների կայացման,
5. որակի ապահովման գործընթացների արդյունավետության բարձրացման համար:

Այս մոտեցումը ապահովում է Համալսարանում տվյալահեն կառավարման մշակույթի ձևավորումը:

Համալսարանն ապահովում է համապատասխան տեղեկատվության հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին՝ պահպանելով թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքները:

Տեղեկատվությունը տրամադրվում է՝

1. Համալսարանի պաշտոնական կայքի միջոցով,
2. ներքին տեղեկատվական հարթակների, էլեկտրոնային կապի տարբեր միջոցներով,
3. հաշվետվությունների և հրապարակումների տեսքով:

Ուսանողները և այլ շահակիցները պատշաճ կերպով տեղեկացվում են իրենց առնչվող գործընթացների, իրավունքների և հասանելի ծառայությունների մասին:

3.10.3. Տվյալների պաշտպանություն և անվտանգություն

Համալսարանն ապահովում է տեղեկատվության պահպանման և մշակման անվտանգությունը՝ իրավական, էթիկական, ընթացակարգային պահանջներին համապատասխան:

Տվյալների կառավարման գործընթացում ապահովվում է՝

1. անձնական տվյալների գաղտնիություն,
2. տեղեկատվության անվտանգ պահպանում,
3. սահմանված մուտքի իրավունքներ,
4. տվյալների օգտագործման պատասխանատվություն,
5. բաց հասանելիություն՝ ըստ անհրաժեշտության:

3.10.4. Մշտադիտարկում և շարունակական բարելավում

Տեղեկատվական համակարգերի գործութնեության արդյունավետությունը ենթարկվում է պարբերական գնահատման և մշտադիտարկման:

Գործընթացն իրականացվում է ՊԻԳԲ շրջափուլի հիման վրա և ներառում է՝

1. տեղեկատվական հոսքերի սահմանում և մշակում,
2. տեղեկատվության հավաքագրում և մշակում,
3. համակարգերի արդյունավետության վերլուծություն,
4. բարելավման գործողությունների պլանավորում և իրականացում:

Այս մոտեցումը ապահովում է տեղեկատվական համակարգերի շարունակական բարելավումն ու կատարելագործումը և դրանց համապատասխանությունը կրթության ՈԱ ազգային և եվրոպական պահանջներին:

ԳՊՀ-ում տեղեկատվական համակարգերն ապահովում են ՈԱ գործընթացների փաստահենությունը, տվյալահենությունը՝ նպաստելով կրթական գործունեության արդյունավետ կառավարմանը և շարունակական բարելավմանը՝ հնարավորություն տալով ԳՊՀ գործունեության բոլոր ոլորտներում կայացնել հիմնավորված որոշումներ, բարձրացնել ՄԿԾ-ների արդյունավետությունը, ապահովել այդ գործընթացների թափանցիկությունը և հաշվետվողականությունը, համապատասխանել եվրոպական չափորոշիչներին:

3.11. ԳՊՀ հանրային պատասխանատվություն

ԳՊՀ-ն իր գործունեությունն իրականացնում է հանրային պատասխանատվության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների հիման վրա՝ ապահովելով շահակիցների իրազեկվածությունը և վստահությունը: Հանրային պատասխանատվությունը հանդիսանում է Համալսարանի ներքին ՈԱ համակարգի կարևոր բաղադրիչ և ուղղված է կրթական, գիտական, ֆինանսական և կառավարման գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկատվության տրամադրմանը:

ԳՊՀ-ն ապահովում է հանրությանը և շահակիցներին ուղղված տեղեկատվության մատչելիությունը՝ այն ներկայացնելով հստակ, ճշգրիտ և հասկանալի ձևաչափերով:

Հրապարակվող տեղեկատվությունը ներառում է՝

1. ՄԿԾ-ների բովանդակությունը, ընդունելության պայմաններն ու չափանիշները,
2. ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքները և շնորհվող որակավորումները,
3. ուսուցման, դասավանդման և գնահատման կիրառվող մոտեցումները,
4. ուսանողների, արտաքին շահակիցների համար հասանելի կրթական և օժանդակ ծառայությունները,
5. շրջանավարտների մասնագիտական առաջընթացի վերաբերյալ տեղեկատվությունը,
6. Համալսարանի գործունեության հիմնական արդյունքները և զարգացման ուղղությունները:

Տեղեկատվության տրամադրումը նպատակ ունի ապահովելու շահակիցների իրազեկ մասնակցությունը ՄԿԾ-ների բարելավման գործընթացներին և աջակցելու տվյալահեն որոշումների կայացմանը:

ԳՊՀ-ն իր հանրային պատասխանատվության սկզբունքներից ելնելով՝ իրականացնում է հաշվետվողականություն հանրության առջև՝ ապահովելով իր գործունեության բաց և հասանելի ներկայացումը: Այդ նպատակով Համալսարանը՝

1. պարբերաբար հրապարակում է հաշվետվություններ կրթական, գիտահետազոտական և վարչական գործունեության վերաբերյալ,
2. ներկայացնում է ռազմավարական նպատակների իրականացման արդյունքները և զարգացման միտումները,
3. ապահովում է ՈԱ գործընթացների արդյունքների և բարելավման գործողությունների հրապարակայնությունը,
4. ստեղծում է պայմաններ շահակիցների մասնակցության և հետադարձ կապի համար:

Հաշվետվողականության գործընթացը նպաստում է Համալսարանի գործունեության նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Հանրային պատասխանատվության արդյունավետ իրականացումն ապահովվում է որակի ապահովման մեխանիզմների կիրառմամբ, որոնք ներառում են՝

1. տեղեկատվության հավաքագրում,
2. տեղեկատվության պարբերական վերանայում և արդիականացում,
3. շահակիցների բավարարվածության և իրազեկվածության գնահատում,
4. բարելավման գործողությունների պլանավորում և իրականացում:

Հանրային պատասխանատվության ապահովումը ԳՊՀ-ում ուղղված է Համալսարանի գործունեության թափանցիկության, հաշվետվողականության և հանրային վստահության բարձրացմանը: Սույն մոտեցումները համահունչ են ՈԱԵՉՈ-ին, ազգային չափորոշիչներին և նպաստում են արտաքին շահակիցների կողմից կրթության որակի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը և Համալսարանի կայուն զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Օգտագործված նորմատիվ իրավական ակտեր՝

1. ՀՀ Սահմանադրություն, փոփոխություններով (ընդունված՝ 06.12.2015թ.):
2. «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1374-Ն որոշում:
3. «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենքը (ընդունված 2022 թվականի նոյեմբերի 16-ին):
4. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2025 թվականի սեպտեմբերի 11-ին):
5. «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2024 թվականի մայիսի 22-ին):

Չափորոշիչներ և ուղենիշներ՝

1. ՀՀ բարձրագույն և մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ (նոր խմբագրությամբ), Երևան, 2026:
2. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG), Belgium, 2015, https://www.enqa.eu/wp-content/uploads/2015/11/ESG_2015.pdf.
3. John Biggs, Constructive alignment in university teaching, HERDSA Review of Higher Education Vol. 1, 2014., **chrome-**extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://www.tru.ca/__shared/assets/**Constructive_Alignment36087.pdf**
1. Il sistema di Assicurazione della Qualita dell'Universita degli Studi di Genova: Attori e Organi, 2024.

Օգտակար հղումներ

1. ԳՊՀ ներքին իրավական ակտեր, **https://gsu.am/hy/nerqiniravakanakter/**
2. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ, **https://www.anqa.am/**
3. Assicurazione Qualità Assicurazione Qualità, **https://aq.unige.it/**
4. The European Higher Education Area (EHEA), **https://ehea.info/about-ehea/**
5. The Bologna Process, **https://ehea.info/about-ehea/#introcution**
6. Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area (ESG), **https://www.eqar.eu/kb/esg/?utm_source=chatgpt.com**

ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Դեմինգի շրջափուլ /ցիկլ/, **PDCA** (անգլ.՝ Plan-Do-Check-Act), բառացի՝ պլանավորում-կատարում-ստուգում-գործում) կամ որոշումների ընդունման անընդհատ կրկնվող գործընթաց, որն օգտագործվում է որակի կառավարման բնագավառում:

ԵԲԿՏ - Եվրոպական բարձրագույն կրթական տարածք:

ՊԻԳԲ - Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում

ՈԱ-Որակի ապահովում

ՈԱԵՉՈՒ - Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ:

ՈԱԱԿ-Որակի ապահովման ազգային կենրոն: